23 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1999 ՀԻՆԳՇԱԲԹԻ 220 (1966)

Azg
Azg
armenian daily

Ասողիկ եղիսկոպոս Արիստակեսյանը ազատվեց կալանքից՝ քաղաքից չբացակայելու ստորագրությամբ

ԵՐԵՎԱՆ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը դեկտեմբերի 21-ի նիստում լսեց ամբաստանյալ Ասողիկ եղիսկոպոս Արիստակեսյանին, որը ժխտեց իրեն առաջադրված մեղադրանքները: Դատարանը բավարարեց սրբազանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը փոխելու պաշտպան Ռուբեն Սահակյանի միջնորդությունը եւ ընտրեց ստորագրությունը՝ քաղաքից չբացակայելու մասին:

Հիշեցնենք, որ դատավոր Տիգրան Պետրոսյանը մեկ անգամ արդեն մերժել էր փաստաբանի նույն միջնորդությունը:

Դատաքննությունը կշարունակվի դեկտեմբերի 23-ին:

ՀԵՏԱՀԱՅԱՑ

Նախագահը «սրբագրում» է արտգործնախարարին

Հայաստանի արտաքին քաղաքականությունը չի շեղվի կոմպրոմիսներ անելու սկզբունքից

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Օրեր առաջ անցկացված մամուլի ասուլիսում ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը անսպասելիորեն եւ չափից ավելի անկեղծանալով հայտարարեց, թե Ռուսաստան-ԱՄՆ հարաբերությունների վատացմանը զուգընթաց կարող է առաջանալ մի անցանկալի իրավիճակ, երբ մենք ստիպված կլինենք կանգնելու «ընտրություն կատարելու» անհրաժեշտության առաջ: Այսինքն, որքան էլ չուզենանք, պիտի հրաժարվենք մեր արտաքին քաղաքականության «կոմպրոմիսներ անելու» սկզբունքից եւ անցնենք հակամարտող գերտերություններից մեկի կամ մյուսի կողմը: Նման բաները եթե նույնիսկ մտածում են բարձրածայն չեն ասում: Դիվանագետին լեզուն տրված է ոչ թե ստում եղածը ափտարհին հայտնելու, այլ, ինչպես հին ասացվածքն է վկայում, իսկական մտքերը թաքցնելու համար:

Ինչեւէ, եղածը եղել է, եւ դեկտեմբերի 21-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ըստ իս, ստանձնեց իր արտգործնախարարին «սրբագրողի» դերը: Նա վստահություն հայտնեց, որ Ռուսաստան-ԱՄՆ հակամարտությունը հիմնականում չեչենական իրադարձությունների պատճառով, անդայման կհարթվի, կողմերը չեն գնա առճակատման: Հետեւաբար, Հայաստանի արտաքին քաղաքականությունը վերանայելու «կոմպրոմիսներ անելու» սկզբունքից հրաժարվելու մասին խոսք լինել չի կարող: Հայաստանը կշարունակի ԱՄՆ-ի հետ բարձր մակարդակի համագործակցությունը , շարունակելով մնալ Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցը:

Տես էջ 2

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Քաղաքական դաշտում սահմանադրական բարեփոխումներն են

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ ՀՀԿ քաղաքական խորհուրդը զգացմունքներից անցնում են գործի

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Ռոբերտ Քոչարյանը կամ իր ափտարակազմի ներկայացուցիչներից որեւէ մեկը չմասնակցեց անցած շաբաթվերջին տեղի ունեցած ՀՀԿ ընդլայնված նիստին, սակայն երեկ, հանդիպելով ՀՀԿ քաղաքական խորհրդի անդամների հետ, Ռոբերտ Քոչարյանը դրական գնահատեց նիստի արդյունքները: Եվ ինչպես նշում է նախագահի մամլո քարտուղարությունը, «Գործընթացները տեղափոխվում են քաղաքական դաշտ եւ ստեղծվում են քաղաքակիրթ ափտարանի համար անհրաժեշտ պայմաններ»: Թե՛ նախագահը, թե՛ ՀՀԿ-ն համաձայնել են, որ հոկտեմբերի 27-ի դեպքերից հետո զգացմունքային ելույթներն անխուսափելի էին, բայց այսօր անհրաժեշտ է քաղաքական հստակ գործունեություն: Ռոբերտ Քոչարյանն իր հերթին կարեւորել է մտահոգությունների կամ հակասությունների առկայության պարագայում խնդիրների պարզ եւ անկեղծ քննարկումը՝ բացառելով ենթաբեմային խաղերը:

Տես էջ 2

Գրոզնիում մոտ 4 հազար գրոհայիններ կան

ՄՈՍԿՎԱ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ- Գրոզնիում ռուսական զորքերը շարունակում են գրոհել չեչենական ուժերի դիրքերը: Զինվորականների գնահատմամբ, Չեչնիայի մայրաքաղաքում մնում են մոտ 4 հազար չեչեն գրոհայիններ: Հիմնական հարվածները հասցվում են Չեչնիայի հարավային շրջաններին, մարտեր են մղվում Վեդենի եւ Արգունի կիրճերի դարպասների մոտ:

Միաժամանակ ռուսական իշխանությունները համարում են «անընդունելի տվյալ պահին ԵԱՀԿ որեւէ քաղաքական միջնորդություն» Չեչնիայում հակամարտության կարգավորման հարցում: Այս մասին հայտարարել է Ռուսաստանի ԱԳՆ ներկայացուցիչ Վլադիմիր Ռախմանինը: Ըստ նրա, նման դիրքորոշման «անհրաժեշտությունն ու պայմանները չկան»: Ռախմանինն ասել է, որ Ռուսաստանի կառավարությունը համաձայն է միայն ԵԱՀԿ բացառապես մարդասիրական գործառույթներին չեչենական հակամարտության լուծման մեջ: Ռուսական իշխանությունները առայժմ անհնար են համարում, անվտանգության նկատառումներով, ԵԱՀԿ անձնակազմի վերադարձը Չեչնիա:

Վարդան Օսկանյանն այսօր մեկնում է Կիեւ

Այսօր սկսվում է ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի երկօրյա պաշտոնական այցը Կիեւ: Ինչպես հաղորդեցին ՀՀ արտգործնախարարությունից, նախարար Օսկանյանը հանդիպումներ կունենա Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի, արտգործնախարար Բորիս Տարասյուկի, Գերագույն ռադայի նախագահ Ալեքսանդր Տկաչենկոյի եւ կառավարության ղեկավարության հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվելու են հայ-ուկրաինական հարաբերությունների հետագա զարգացմանն ու խորացմանը վերաբերող հարցեր: Նախատեսվում են ստորագրել «ՀՀ կառավարության եւ Ուկրաինայի նախարարների կաբինետի միջեւ կրթության բնագավառում համագործակցության մասին», «ՀՀ կառավարության եւ Ուկրաինայի կառավարության միջեւ երկաթուղային տրանսպորտի բնագավառում համագործակցության մասին», «ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության եւ Ուկրաինայի մշակույթի եւ արվեստի նախարարության միջեւ մշակութային բնագավառում համագործակցության մասին», «ՀՀ կառավարության եւ Ուկրաինայի կառավարության միջեւ դեղագործական արդյունաբերության բնագավառում համագործակցության մասին», «ՀՀ կառավարության եւ Ուկրաինայի նախարարների կաբինետի միջեւ քաղաքացիների առանց վիզաների այցելությունների մասին», «ՀՀ կառավարության եւ Ուկրաինայի նախարարների կաբինետի միջեւ զբոսաշրջիկության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրերն ու «ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության եւ Ուկրաինայի մշակույթի եւ արվեստի նախարարությունների միջեւ 2000-2002 թթ. մշակութային համագործակցության մասին» ծրագիրը:

Նախարար Օսկանյանի գլխավորած պատվիրակությունը կվերադառնա Երեւան դեկտեմբերի 24-ին:

ՀՀ ՍԳՆ ՍՍՍԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԼՂՀ նախագահը հանդիպումներ կունենա Երեւանում

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ- ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը դեկտեմբերի 22-ին ափտարանային այցով մեկնել է Երեւան: Ինչպես «Նոյյան տապանին» հայտնեցին ԼՂՀ նախագահի մամլո ծառայությունից, այցի շրջանակներում նախատեսվում են հանդիպումներ ՀՀ պետական եւ քաղաքական գործիչների հետ:

Այսօր կօծվի Սպիտակի եկեղեցին

ՎԱՆԱՁՈՐ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Դեկտեմբերի 23-ին հավատացյալ ժողովրդի առջեւ հանդիսավորությամբ դռները կբացի Սպիտակի սբ Հարություն նորակառույց եկեղեցին: Եկեղեցու բացման արարողությունը եւ օծումը կկատարի Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ կաթողիկոսը: Սպասվում է, որ սուրբ տաճարի բացման հանդիսությանը կմասնակցի ՀՀ նախագահը:

Վախճանվեց Հայրիկ Մուրադյանը

ԵՐԵՎԱՆ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ- Դեկտեմբերի 22-ին կյանքի 95-րդ տարում վախճանվեց հայ մշակույթի մեծ երախտավորներից մեկը՝ Հայրիկ Մուրադյանը: Նա խորհրդային Հայաստանում վերածնեց հայկական ավանդական երգերը եւ դրանց բարձրաճաշակ կատարողն էր:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Մոսկվան Վրաստանին զգուշացնում է ահաբեկիչներին խրախուսելուց

ՄՈՍԿՎԱ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- «Ցանկալի կլիներ հուսալ, որ Վրաստանի ղեկավարությունը կհրաժարվի ահաբեկիչներին խրախուսելու վտանգավոր ուղուց: Այդ են պահանջում Վրաստանի ժողովրդի, երկրի ազգային անվտանգության, կովկասում խաղաղության ու կայունության ամրապնդման բուն շահերը», ասվում է Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարության հայտարարության մեջ, որն ստացվել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունում: «Ինչպիսի էլ որ լինեն վրացական իշխանությունների նման գործողությունների դրդապատճառները, ակներեւ է, որ Ռուսաստանի եւ Վրաստանի ժողովուրդների բարեկամության ու հարգանքի ոչ մեկ հայուրամյակ կազմող հարաբերությունները խարխլելու համար պատասխանատվությունն ամբողջովին եւ լիովին ընկնում է պաշտոնական Թբիլիսիի վրա», ընդգծվում է հայտարարության մեջ:

Դաշնության խորհուրդը վավերացրեց միութենական պայմանագիրը

ՄՈՍԿՎԱ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- ՌԴ Դաշնության խորհուրդն այսօր վավերացրեց Ռուսաստանի եւ Բելառուսի միութենական պետության ստեղծման պայմանագիրը: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, համապատասխան դաշնային օրենքի օգտին քվեարկեց 158 սենատոր: Նրանցից երկուսը ձեռնպահ մնացին: «Դեմ» ձայներ չեն եղել:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ»

Քարիզ-Երեւան՝ Ֆրանկֆուրտով

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մի ուղեւորության տպավորություններ. որ Երեւան-Քարիզ-Երեւան չվերթի փոխարեն տեղի ունեցավ Երեւան-Քարիզ-Ֆրանկֆուրտ-Երեւան չվերթով եւ ոչ Գերմանիա այցելելու ցանկության ավելցուկից այլ «Հայկական ավիաուղիների» ափտարանի «շնորհիվ»:

Արար առաջին

Մենք ունենք օդանավակայան, որտեղ, 20-րդի չափանիշներից չբեղվելով, սկսվում եւ ավարտվում է մեր երկիրը: Բայց թերեւս գոյության փաստով էլ սպառվում են անբեղ չափանիշները: Սկսվում է անհասկանալի իրարանցում, որտեղ մաքսային ափտարողների դրած կորզելու հնարավոր ու անհնար միջոցների օգտագործումը հասնում է այնտեղ, որ սկսում են համոզել քեզ, թե ականջներդ անծնագրիդ լուսանկարում նման չեն քո իրական ականջներին: Համոզել չի հաջողվում: Բայց ոչինչ: Մաքսային ափտարողների հետ եւս մեկ հանդիպում կա մինչեւ ինքնաթիռ, երբ պայուսակներդ մի կողմ նետելով, հրելով ու արագության կոչելով, հանկարծ հիշում են, որ պիտի վճարես 20 դոլար: Ինչի՞ համար: Չես էլ հասցնում տեղեկանալ:

Այսինքն հարցնում ես, բայց չեն պատասխանում: Ի դեմ, «վճարվող» գումարի չափն էլ հստակ չէ, ճանգի արդեն ինքնաթիռում, երբ զայրացած ուղեւորներն իրար հետ քննարկում են խաբվածության անտանելիությունը, պարզվում է, որ մաքսային ափտարողների «նորին գերազանցություն» կամքը միայն երբեմն է «համեստ» եղել, իսկ երբեմն էլ ստիպել են ուղեւորներին շռայլ լինել: Երբ այդ մասին ինքնաթիռում զրուցում էինք ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանի հետ (ՀՀ ԱԺ պատվիրակությունը դեկտեմբերի 13-ին մեկնում էր Քարիզ), վերջինս համաձայնեց փաստի անընդունելիությանը: Չհամաձայնելը խիստ դժվար էր:

Տես էջ 8

digitised by A.R.A.R.@

ՈՒՇԱԳԻՐ

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Կանանց հանրաքեսական խորհուրդը մրցանակներ շնորհեց լրագրողներին

Կանանց հանրաքեսական խորհուրդը դեկտեմբերի 22-ին կլոր սեղանի քննարկմանն էր ներկայացրել «ՀՀ-ում 1998-2000 թթ. կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի» կիրառման գնահատումը: Կլոր սեղանի մասնակիցները մի շարք նախարարությունների աշխատակիցներ էին, որոնք ծրագրում աշխատանքի իրենց մասնաբաժինն ունեին: Մասնակցում էին նաեւ յուրաքանչյուր բնագավառին հակակշռող կանանց հասարակական կազմակերպությունները, որոնք հիմնականում համաձայն չէին գերատեսչությունների ներկայացուցիչների «հաշվետվությանը» եւ ծրագրի ընթացքի վերաբերյալ իրենց տեսակետներն ավելի կտրուկ էին արտահայտում:

Քննադատության արժանացավ թե ազգային ծրագիրը սոցապնախարարության համակարգում ներդնելը եւ թե կառավարության կողմից ծրագրի նկատմամբ ցուցաբերված անտարբերությունը: ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ներկայացնող Զեմմա Անանյանը շեշտեց, որ ԱՊՀ բոլոր հանրաքեսություններում Պեկինի խորհրդաժողովից հետո նման հանձնաժողովներ ստեղծվել են կառավարությանը կից եւ 95 թ.-ից սկսած մյուս հանրաքեսությունները հաջորդաբար հայտարարել են կանանց տարի ու հետեւողականորեն իրագործել սեռային իրավահավասարության քաղաքականությունը:

Նշենք, որ առաջին դեմքն է, երբ մեր կին խորհրդականները հիացմունքով են խոսում Ղրղզստանում տեսական հոգածությամբ իրագործվող սեռային իրավահավասարության քաղաքականության մասին: Մինչդեռ Հայաստանում հարցի նկատմամբ կառավարության ցուցաբերած անտարբերությունը հանգեցրեց նրան, որ ՍԱԿ-ը սառեցրեց իր աջակցությունը Պեկինի խորհրդաժողովին ակտիվ մասնակցություն ցուցաբերած Հայաստանի Հանրաքեսությանը, եւ կանանց կազմակերպությունները «Պեկին-5»-ին ներկայացուցչական կազմով չեն էլ մասնակցելու:

Այնուամենայնիվ, տարեմուտի նախօրեին խուսափելով սուր առճակատումներից ու հակադրումներից որոշվեց մի կողմ դնել արվածն ու չարվածը եւ ծեռնամուխ լինել 2000 թվականը Հայաստանում կանանց ազգային ծրագրի կիրառման տարի հայտարարելուն: ԿՀԽ նախագահ Նորա Հակոբյանը շեշտեց, որ ՀԿ-ները ծրագրի կատարման թերացման հարցում մեղքի իրենց բաժինն ունեն: հարցերը բարձրացնում են, բայց «ասած ցույց չեն տալիս» իրագործելու համար:

Քննարկման ավարտին նախատեսված էր նաեւ մրցանակների հանձնում, որը կազմակերպությունը հայտարարել էր դարձյալ հասարակության մեջ կանանց տեղի ու դերի բարձրացմանը նպաստելու նկատառումով: ԿՀԽ նախագահ Նորա Հակոբյանը շեշտեց «Նովոյե վրեմյա» եւ «Ազգ» թերթերի դերը կանանց հիմնահարցերի լուծման եւ կանանց կազմակերպությունների ուժերի միաբանման գործընթացում: Սահմանված երեք առաջին մրցանակները շնորհվեցին հեռուստալրագրող Ռուզան Խաչատրյանին «Հայուհի» հաղորդաշարի համար, «Ազգ» թերթից Ռաֆիկ Հովհաննիսյանին «Երբ կինն օտարվում է հասարակությունից» հրապարակման համար, «Նովոյե վրեմյա» թերթից Վալերիա Զախարյանին առողջապահության թեման հետեւողականորեն մեկնաբանելու համար: Երկրորդ մրցանակը շնորհվեց ռադիոլրագրող Լիլիթ Մանասերյանին «Ժողովուրդ, իրավունք, օրենք» հաղորդաշարում ազգային ծրագիրը մեկնաբանելու համար: Երրորդ մրցանակ շնորհվեց Վահրամ Օրբելյանին «Սյունիք» թերթում կանանց հիմնահարցերը պարբերաբար լուսաբանելու համար:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Նախագահը «արքագրում» է արտգործնախարարին

Սկիզբը էջ 1

Այդ քաղաքականությունը բխում է մեր ազգային շահերից, համապատասխանում է տարածաշրջանային անվտանգության ապահովման պահանջներին: Արդեն հանդիպման «պաշտոնական» մասի ավարտից հետո, անկաշկանդ զրույցի ժամանակ, նախագահը կարծիք հայտնեց, թե «անկախությունը չեչենների գրպանում դրած էր», բայց նրանք իրենց ահաբեկչություններով, մարդկանց առուվաճառով, Դաղստանի վրա հարձակմամբ համաշխարհային հանրությանն ապացուցեցին, որ դեռեւս «պատրաստ չեն անկախության», անընդունակ են այդքան բարձր մակարդակի ինքնակառավարման: Սա ասվում էր ԼՂՀ վերջին իրադարձությունների համատեքստում, ընդգծելու համար, թե որքան կարեւոր է աշխարհին ցույց տալ, որ արցախահայությունն ի վիճակի է ժողովրդավարական արժեքների պահպանության, սեփական քաղաքակիրթ պետականության կայացման: Սակայն անկախ այս համատեքստից, դժվար է նախագահի դիտարկմանը չհամաձայնել. չեչեններն իրենց խժդժություններով իրենք իրենց իրոք դուրս դրին համաշխարհային քաղաքակրթությունից: Հանուն այդպիսի ցածր մակարդակի վրա գտնվող համայնքի աշխարհը չի հակադրվի Ռուսաստանին, չի խզի իր հարաբերություններն այդքան մեծ եւ ռեսուրսներով այդքան հարուստ երկրի հետ:

Թե ինչու արտգործնախարար պրն Օսկանյանը հաշվի չէր առել այս հանգամանքը դժվարանում եմ ասել. եթե ինքն այդ չէր կռահել, ապա մի՞թե հնարավորություն չուներ նախապես կարծիքներ փոխանակել ՀՀ նախագահի հետ եւ ասուլիսից առաջ ճշտել իր դիրքորոշումը: Ի վերջո, պրն արտգործնախարարը ոչ թե իր, այլ նախագահի եւ մանավանդ պետության արտաքին քաղաքականությունն է իրականացնում:

Ի դեպ, պետության արտաքին քաղաքականության վերջին մեկ տարվա իր քայլերի առավել նշանակալից արդյունքը ՀՀ նախագահը համարում էր ԵԱՀԿ Ստամբուլի վեհաժողովում իր առաջ քաշած տարածաշրջանային անվտանգության համակարգ ստեղծելու գաղափարի հաջողությունը: Ըստ իրեն, այդպիսի համակարգին միանալու լուրջ շահագրգռություն են ցուցաբերում Ռուսաստանը, Թուրքիան, Իրանը, Վրաստանը, ԱՄՆ-ը: Վերջինս սկզբում, այսպես ասենք, այնքան էլ ոգեւորված չի եղել ստեղծվելիք համակարգին Իրանի միանալու հեռանկարով, սակայն այժմ արդեն համաձայն է կամ մոտ է համաձայնելու: Միակ երկիրը, որ առարկում է Ադրբեջանն է: Թեեւ Ստամբուլում Հեյդար Ալիեւը պատշտանել էր գաղափարը, սակայն հիմա, ինչպես երեւում է, ետ է կանգնում դրանից, թերեւս, միակ պատճառաբանությամբ, թե «ինչ որ Հայաստանն առաջարկում է Ադրբեջանի համար լավ չէ»: Այստեղ նախագահը թեթեւ հեգնեց, թե ինքը պատրաստ է նույնիսկ գաղափարի «հեղինակային իրավունքը» զիջել Ադրբեջանին, միայն թե իրականանա: Իսկ գաղափարի էությունն այն է, որ համակարգի մեջ մտնող երկրները համաձայնում են 25 տարով սառեցնել իրենց քաղաքական տարածայնությունները եւ զարկ տալ տնտեսական համագործակցությանը տարածաշրջանը դարձնելով ամեն տեսակետից անվտանգ: Նախագահը գտնում էր, որ թե մեր, թե հարեւան երկրների չափազանց շատ դժվարությունները «գալիս են փոխադարձ անվստահությունից», սեփական անվտանգության համար մեկը մյուսից ունեցած վախից: Իր առաջարկի էությունն այդ վախը հաղթահարելն է, եւ այժմ, Ստամբուլից հետո, Հայաստանի առաջարկն ամենայն ուշադրությամբ քննարկվում է ամենաբարձր մակարդակներում: Իմ տպավորությամբ, Ռոբերտ Քոչարյանը հույս ուներ, որ այդ առաջարկն ի վերջո մարմին կստանա:

Այդ դեպքում առավել քան անհասկանալի էր պրն Օսկանյանի տարածած «խուճապը», քանզի մեկ կամ մյուս կողմն անցնելու հնարավորության, այդպիսի ծանր երկընտրանքի առաջ կանգնելու հավանականության նրա անթաքույց ակնարկի հարուցած հասարակական զգացողությունը շատ նման էր հենց խուճապի, այն էլ առանց չակերտների:

Այնուամենայնիվ հարկ է նշել, որ անցյալ կիրակի օրը ազգային հեռուստատեսության «Օրակարգ» ծրագրում պրն Օսկանյանն ինքն անդրադարձավ Սամուլի ազգային ակումբում արած իր նախորդ հայտարարությանը ու փորձեց մեղմացնել դրա թողած տպավորությունը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Քաղաքական դաշտում սահմանադրական բարեփոխումներն են

Սկիզբը էջ 1

«Ազգը» դիմեց ՀՀԿ նախագահ եւ խորհրդարանում «Միասնություն» խմբակցության ղեկավար Անդրանիկ Մարգարյանին՝ մանրամասնելու հանդիպման ընթացքում քննարկված առանցքային խնդիրները: Անդրանիկ Մարգարյանն ընդգծեց, որ նախագահի հետ մի անգամ եւս անդրադարձել են սահմանադրական բարեփոխումների ընթացքին: ՀՀԿ-ն դեռեւս մտադիր չէ իր ներկայացուցիչներով համալրել նախագահին առընթեր սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովը: Մինչեւ դեկտեմբերի վերջ իրենք ակնկալում են տանել եւ ուսումնասիրել թե՛ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի կողմից ղեկավարվող ներկայիս հանձնաժողովի նյութերը, թե՛ Պարույր Հայրիկյանի քաղաքական հանձնաժողովի աշխատանքների արդյունքները: Ղեկավարելով այս երկու կառույցների գործունեության արգասիքը, ՀՀԿ-ն կկարողանա պատկերացում կազմել, թե առ այսօր ինչ է արվել սահմանադրական բարեփոխումների ճանապարհին, որից հետո միայն կհստակեցվի դիրքորոշումը: Անդրանիկ Մարգարյանն «Ազգին» հայտնեց, որ առկա նյութերն իրենք քննարկելու եւ ամբողջացնելու են ԱԺ պեսիարավական հարցերի մշտական հանձնաժողովում, ուր ընդգրկված են խորհրդարանի բոլոր խումբ-խմբակցությունների պատգամավորներ, այսինքն՝ խորհրդարանը հասու է մշակել սահմանադրական փոփոխությունների բոլորի կողմից առավելագույն ընդունելի նախագիծ, որը կարտահայտի ներկայիս քաղաքական ուժերի մեծամասնության հիմնական կարծիքները: ՀՀԿ-ն համոզված է, որ սահմանադրական փոփոխությունների փաթեթը պետք է պատրաստ լինի մինչեւ մայիս, բայց այս աշխատանքում պետք է զերծ մնալ ավելորդ հապճեպությունից: Այդ իսկ պատճառով իրենք նախ ուզում են ստուգել իրենց առաջարկվող ծանրությունը եւ հետո միայն փորձել բարձրացնել նշածողը՝ արդեն չվախենալով աշխատանքները ձախողելու կամ ձգձգելու շահարկումներից:

ՀՀԿ խորհրդի անդամները «Ազգի» հետ զրույցում նշեցին նաեւ, որ Դավիթ Հարությունյանի հանձնաժողովը չափազանց դանդաղ է աշխատում՝ հավաքվում են շաբաթը մեկ, 2 ժամ խոսում եւ բաժանվում, մինչդեռ բազմակուսակցական հանձնաժողովը կհավաքվի ամեն օր եւ 5-6 ժամյա աշխատանքից հետո սահմանադրական բարեփոխումների փաթեթը կառարկայանա:

Ղարաբաղում եւս գործողությունները տեղափոխվում են քաղաքական դաշտ

Ռոբերտ Քոչարյանը ՀՀԿ-ին հայտնել է, որ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանն այսօր կժամանի Երեւան՝ պարզաբանելու Արցախում տիրող ներքաղաքական իրավիճակը: Ե՛վ Ռոբերտ Քոչարյանը, ե՛ւ ՀՀԿ-ն դրական են գնահատել Սամվել Բաբայանի ներկա դիրքորոշումը՝ կուսակցություն ստեղծելու եւ այդ կուսակցության միջոցով իր նպատակները քաղաքական հարթություն տեղափոխելու: Քաղաքական կուսակցությամբ կարելի է մասնակցել բոլոր տեսակի ընտրությունների (խորհրդարանական, նախագահական-Ն. Դ.), իսկ քաղաքական եւ կուսակցական պայքարը բացառում է փողոցային ընդհարումները: Կարող ենք արձանագրել, որ հայաստանյան քաղաքական վերնախավը զգուշորեն ողջունում է Սամվել Բաբայանին՝ պայքարի մեթոդները փոխելու համար, հատկապես ԵԱՀԿ նոր առաջարկների նախաշեմին:

Հանրաքեսականները նախագահի առջեւ բարձրացրել են նաեւ ազգային անվտանգության համալիր ծրագրի մշակման հարցը: Այս պարագայում եւս ՀՀԿ քաղաքական խորհուրդը կարծում է, որ խորհրդարանը, ուր ՀՀԿ-ն ՀԺԿ-ի հետ քաղաքական մեծամասնություն է, կկարողանա լուրջ դերակատարում ունենալ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգը մշակելիս:

Հայաստանի տնտեսական իրավիճակն առավել քան մտահոգում է թե՛ խորհրդարանական մեծամասնությանը, թե՛ նախագահին: Երկու կողմերն էլ իրատեսորեն արձանագրում են, որ 2000 թ. պետբյուջեն հեռու է լինելու ցանկալիից, ուստի անհրաժեշտ կլինի աշխատանքի ծանրության կետրոնը տեղափոխել արտաքին ներդնողների վստահությունը շահելու ուղղությամբ եւ դրսից Հայաստան ֆինանսական միջոցներ ներգրավելու հետեւողական աշխատանք ծավալել: Դրա համար ամենից առաջ պետք է վերականգնել վստահությունը Հայաստանի հանդեպ, ապացուցել, որ Հայաստանում ներդրումներ կատարելն անվտանգ է, ապահով: Սույն ճանապարհին հոկտեմբերի 27-ի դեպքերի օբյեկտիվ քննությունը վճռորոշ է:

Հոկտեմբերի 27-ի դեպքերից հետո Հայաստանում մի նոր շրջան է սկսվում, որտեղ, մեր կողմից արձանագրենք, ուր երկու կողմերի ուժերի հարաբերակցությունը գրեթե հավասարվում է: Եթե նախագահը խոցելի է դարաբաղյան հակամարտության կարգավորման եւ տարածաշրջանային անվտանգության դաշտում մեզ պարտադրվող հնարավոր ծրագրերի առումով, ապա Հանրաքեսականը, իբրեւ ԱԺ քաղաքական մեծամասնություն եւ վարչապետի հենարան, սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից: Հայաստանում ծմեռ է, տնտեսական աշխուժությունն անկում է ապրում, բյուջեում չեն հավաքվում օրենքով սահմանված հարկատեսակները, ընկնում են արտահանման եւ ներմուծման ծավալները, իսկ ամեն ինչ ունի իր վերջնական պատասխանատուն:

Կեղծ ահազանգ Կապանում

ԿԱՊԱՆ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Դեկտեմբերի 22-ին ժամը 14:45-ին մի անհայտ կին զանգահարել է Կապանի հրեթ ծառայություն եւ հայտարարել, թե Սյունիքի մարզպետարանի շենքում տեղադրվել է պայթուցիկ սարք, որը կպայթի ժամը 15:00-ին: Անմիջապես հիշյալ վայր են ժամանել ՆԳ եւ ԱԱ աշխատակիցները, որոնք էվակուացրել են մարզպետարանի աշխատակիցներին ու մերձակա 2 շենքերի բնակիչներին եւ սկսել են ստուգել մարզպետարանի սենյակները:

Ժամը 17:00-ին պարզվեց, որ մարզպետարանի շենքում ոչ մի պայթուցիկ սարք չի հայտնաբերվել, եւ մարզպետարանի աշխատակիցները շարունակում են իրենց բնականոն աշխատանքը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԲԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տնտեսական

Էլեկտրական բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման սառույցը կոտրվում է

SAC-3 վարկի տրամադրման խոշընդոտներից մեկը վերացա՞վ

SAC-3 վարկի վերջին 25 մլն դոլարը Համաշխարհային բանկը հրաժարում է տրամադրել Հայաստանին: Ծրագրման 3 ոլորտներից 2-ը կազմված են բաշխիչ ցանցերի միջազգային մրցույթով սեփականաշնորհման հետ՝ ա) Երևանի, Կենտրոնի, Հարավային եւ Հյուսիսային բաշխիչ ցանցերը, ըստ ՀԲ-ի հետ դայմանավորվածության, դեռ է ենթարկվեին միջազգային աուդիտի, որի արդյունքների հիման վրա դյուրին կլիներ որոշել բաշխիչ վարչատեսության օրոք, եւ Վազգեն Սարգսյանի վարչատես դառնալուց հետո տարածայնություններ ծագեցին որոշման նպատակահարմարության վերաբերյալ: Մտահոգությունների հիմքում Հայաստանի տարածաշրջանային դիրքն է, աշխարհաքաղաքական իրավիճակը, որի հետեւանքով մենք դարբերաբար հայտնվում ենք շրջափակումների մեջ: Սակայն համաձայնությունն արդեն կնքված է, եւ դրա դիմաց Հայաստանը սացել եւ դեռ սանալու է հարյուրավոր միլիոնների հասնող վարկեր, դրամաշնորհներ: գնացքը ես չես վերադարձնի, հատկապես որ հարեւան Վրաստանը Թբիլիսիի բաշխիչ ցանցն արդեն վաճառել է: Նրանց առաջին հացը կո՞ւտ է գնացել, թե ոչ, հայտնի չէ, բայց Թբիլիսիում էներգամատակարարումը եւ գումարների հավաքագրելիությունը հեռու է դատաշած մակարդակից:

Պետությունն իր ձեռքում կդահի բաշխիչ ցանցերի բաժնետոմսերի 24 տոկոսը

Սեփականաշնորհման հիմքում ընկած է հետեւյալ սկզբունքը: կառավարությունը վաճառի է հանում 4 բաշխիչ ցանցերից յուրաքանչյուրի բաժնետոմսերի 51 տոկոսը: վերահսկիչ փաթեթը, 5 տոկոսը մնալու է կոլեկտիվի ձեռքում, 20 տոկոսի բաժնետեր դառնալու հավակնություն ունի Եվրաբանկը, իսկ 24 տոկոսը դեսությունը կդահի իր ձեռքում: Երեւանի եւ Կենտրոն բաշխիչ ցանցերը հարաբերական բարվոք վիճակում են եւ արդեն շահութաբեր ընկերություններ են, ինչը չի կարելի ասել Հարավային եւ Հյուսիսային բաշխիչ ցանցերի մասին, որոնց արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ է ոչ միայն լավ կառավարիչ-օդերատոր, այլեւ ներդնող: Ուստի մեր կառավարության դայմանը հստակ է: Երեւանի շահութաբեր բաշխիչ ցանցը վաճառվելու է Հյուսիսային բաշխիչ ցանցի հետ, Կենտրոնը Հարավայինի հետ, փաթեթով բարձրորակ եւ ցածրորակ արդյունքների զուգորդում: Կառավարության համար անշուշտ ամենանախընտրելին 4 ցանցերի վերահսկիչ փաթեթը մեկ ընկերությանը վաճառելն է: Նախնական գնահատմամբ, բաշխիչ 4 ցանցերի միասնական գինը 100 մլն դոլար է: Ի դեմ, Վրաստանի Թբիլիսիի ցանցը վաճառվեց 25 մլն դոլարով AES ամերիկյան ընկերությանը, այսինքն մեր տարածաշրջանում բաշխիչ ցանցերի մեկնարկային գները գրեթե հավասարազոր են: Հայաստանյան բաշխիչ ցանցերի սեփականատեր կարող է դառնալ տարեկան նվազագույնը 150 մլն դոլար շրջանառություն ունեցող էներգետիկ համակարգի մասնագիտացված օդերատոր ընկերությունը: Մասնագիտացված լինելու փաստը հատուկ շեշտվում է: Ըստ այդմ գնորդի տարեկան շրջանառության առնվազն 100 մլն դոլարը դեսք է գոյանա ուղղակի օդերատորական գործունեությամբ: բաշխիչ ցանցերի մեկնարկային գները գրեթե հավասարազոր են: Հայաստանյան բաշխիչ ցանցերի սեփականատեր կարող է դառնալ տարեկան նվազագույնը 150 մլն դոլար շրջանառություն ունեցող էներգետիկ համակարգի մասնագիտացված օդերատոր ընկերությունը: Մասնագիտացված լինելու փաստը հատուկ շեշտվում է: Ըստ այդմ գնորդի տարեկան շրջանառության առնվազն 100 մլն դոլարը դեսք է գոյանա ուղղակի օդերատորական գործունեությամբ:



Մրցույթին մասնակցելու 15 կազմակերպություն է հայտ ներկայացրել 8 երկրից, որոնցից ամենաազդեցիկը ռուսական, շվեյցարական եւ ամերիկյան ընկերություններն են: ՌԴ-ից հայաստանյան ցանցերի վերահսկիչ փաթեթի տեր դառնալու հայտ է ներկայացրել РАО-ЕЭС-ը, «Իտեռան», որը թեեւ գրանցմամբ միջազգային կորդորացիա է, սակայն նրա ակունքներում Ռեմ Վյախերեւի «Գազդրոմն» է, ամերիկյան AES-ը, շվեյցարական ABB-ին, վերջին ընկերության հնարավորությունները բավականին բարձր են գնահատվում, քանզի նա որոշակի հավակնություններ ունի նաեւ Երեւանի ՋԷԿ-ի հանդեպ:

ՀԲ դժգոհություններից 2-ը հաղթահարելու ուղղությամբ մեր կառավարությունը ջանքեր գործադրում է, ուստի կարելի է հուսալ, որ 25 մլն դոլարը գոնե հունվարին կհատկացվի Հայաստանին, բայց եւ միաժամանակ դեսք է մտահոգվել, որդեսզի բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման մրցույթի հիմնական դայմանները արտացոլեն մեր ազգային անվտանգության դեռեւս գոյություն չունեցող, սակայն արդեն կարեւորվող հայեցակարգի ուղղությունները:

Ն. ԳԻԼԲԱՐՅԱՆ

HSBC բանկը տարին փակում է գոհ արտով

Ֆինանսական եւ բանկային ծառայություններ մատուցող աշխարհի խոշորագույն HSBC հոլդինգի հայաստանյան մասնաճյուղը՝ «HSBC Հայաստան» ՓԲԸ-ն, տարին փակում է, իր իսկ գնահատմամբ, հաջող արդյունքներով ու հայտարարում, որ դատաս է դիմավորել 2000 թվականը, եւ բանկի հաճախորդները կշարունակեն ստանալ ակնկալվող բարձրորակ սպասարկումը: Բանկից տեղեկացնում են, որ բանկը այս տարի գերազանց առաջընթաց է ունեցել, եւ 1999 թվականի դեկտեմբերի 9-ին, երբ բազմաթիվ ընկերություններ ու հասատություններ՝ ակնկալում էին համակարգչային համակարգի հետ կապված բազմաթիվ դժվարություններ, «HSBC Հայաստանը» ոչ մի խոչընդոտի չի հանդիպել: Բանկը 2000 թվականի նախադատրաստական աշխատանքները սկսել էր դեռ 1993 թվականից, այսօր արդեն բանկի համակարգչային ամբողջ համակարգն ու սարքավորումները համադատասխանում են 2000 թվականի հիմնախնդիրների դահանջներին: Բանկը մշակել է նաեւ եկող տարվա կանխարգելիչ միջոցառումների ծրագիր, որի նպատակն է ապահովել հաճախորդների անխափան սպասարկումը հազարամյակների անցումային փուլում ու նաեւ դրանից հետո: Այս տարվա ընթացքում բանկը «Հազարամյակի հիմնախնդիր» անվանումով սեփնարներ է անցկացրել Հայաստանում ու տրամադրել «Հազարամյակի հիմնախնդրի լուծումը» տեղեկատուն: Այդ ամենը կազմակերպվել է բանկի գործառ հաճախորդներին տեղեկատվություն ապահովելու նպատակով: Մի խոսքով, Հայաստանի ամենախոշոր օտարերկրյա ռեզիդենտներից մեկը՝ «HSBC Հայաստան» ՓԲԸ-ն, որը ամեն առիթով նշվում է որդես Հայաստանում օտարերկրյա կապիտալի ամենահաջող ներդրումներից մեկը, 1999 թվականը փակում է գոհ արտով եւ դեդի նոր հազարամյակ «հարթ ու ապահով ուղեւորություն» է ցանկանում բոլորին:

«Արմենիան» իր հին կահավորանքը նվիրում է կարիքավորներին

Արհմիության հայցն ընդդեմ հյուրանոցի տնօրենության մերժվեց

Ինչպես հայտնի է, «Արմենիա» հյուրանոցային համալիրի երկրորդ մասնաշենքն արդեն նախապատրաստվում է հիմնովին վերանորոգման: Ամբողջությամբ դատարկվել է մասնաշենքն, ու քանի որ նախատեսվում է ամբողջությամբ փոխել նրա համարների կահավորանքը, տնօրենության աննախադեմ որոշմամբ եւ հյուրանոցի սեփականատեր «AK Development» ընկերության համաձայնությամբ հին կահավորանքի 30 տոկոսը կնվիրվի հյուրանոցի նախկին եւ ներկա առավել կարիքավոր աշխատակիցներին: Դրանից բացի, հավելյալ նվիրատվություններ կկատարվեն նաեւ երկրորդ համաշխարհային եւ դարաբաղյան դատերազմների մասնակից մարտիկների, ինչպես նաեւ առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամների ընտանիքների անդամներին, միայնակ մայրերին եւ հյուրանոցում 10 տարուց ավելի աշխատած 150-ի հասնող բոլոր կարիքավոր աշխատակիցներին: Կահավորանքի մնացած 60 տոկոսն ամբողջությամբ հանձնվել է Հայ օգնության ֆոնդին՝ բարեգործական նվիրատվության համար:

Այս նվիրատվությունը կարելի է համարել շարունակությունը հյուրանոցի այն աննախադեմ փոխհատուցման ծրագրի, ըստ որի վերոհիշյալ մասնաշենքի վերակառուցման նպատակով կրճատված ու թոշակի անցած աշխատակիցները առաջիկա երկու տարում կվճարվեն իրենց աշխատավարձի 50 տոկոսի չափով: Այդ աննախադեմ ծրագիրը հանդարտեցրեց այս հյուրանոցի տնօրինության շուրջ բորբոքված կրքերը, որոնք բորբոքում էր հյուրանոցի արհմիությունը:

Հյուրանոցից սացված մեկ այլ հաղորդագրության համաձայն, փաստորեն արհմիութենական կոմիտեի հայցն ընդդեմ «Արմենիայի» տնօրենության, Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է: Տեղեկացնենք, որ հայցվորը դահանջում էր «կոլեկտիվ դայմանագրով նախատեսված դարտավորությունները չկատարելու դեդքում բարոյական ու նյութական վնասը 1 մլն 24 հազար դրամի չափով, գանձել հյուրանոցի տնօրինությունից»: Դատարանի որոշմամբ, տնօրենությունը չի խախտել կոլեկտիվ դայմանագիրը եւ հայցվորին վնաս չի դատճառել: Այսդիսով, կարող ենք փաստել, որ մեկ տարուց ավելի շարունակվող հակասությունը՝ արհմիության եւ տնօրենության միջեւ, որը մի առիթով նմանեցրել էինք երկար ձգվող բրազիլական սերիալի, 1999-ի հետ հանգեց իր տրամաբանական ավարտին:

Մ. Գ.

ԱՇԽԱՏԱՆՔ

Գյումրին մի քանի օրից կարող է զրկվել ջեռուցումից

Գյումրի քաղաքին, ավելի կոնկրետ՝ նրա «Անի» թաղամասին երկու շաբաթ առաջ դայմանականորեն տրված ջեռուցումը, որից այսօրեղ օգտվում է ավելի քան 6100 ընտանիք, դահանջվող կանխավճարը չհավաքելու դեդքում մի քանի օրից կարող է դադարեցվել: Թե Շիրակի ծմռան դայմաններում դա ինչ վիճակ կստեղծի դաղ բետոնե շենքերում ապրող մարդկանց համար, անգամ դժվար է դատկերացնել:

Նկատի ունենալով առանց այն էլ աղետյալ Գյումրիի բնակչության զանգվածային անվճարունակության հանգամանքը, այս տարի էլ որոշ քայլեր են ձեռնարկել նրա առավել անդաշտդան մասի ծմեռային հոգսերը դրոշ տալու համար: Տնակներում եւ հարմարեցված այլ ժամանակավոր կացարաններում ապրող շուրջ 14 հազար ընտանիքների կառավարության աջակցությամբ կտրվի 120 օրվա համար 600 կվտ/ժ անվճար էլեկտրաէներգիա՝ նաեւ այդ կացարանների տաքացման նպատակով: Շիրակի մարզդետի էներգետիկայի նախարարության հետ ձեռք բերած համաձայնությամբ, մարզում էլեկտրաէներգիայի ծախսի դիմաց կուտակված դարտքեր ունեցող հոսանքազրկված շուրջ 15,5 հազար եւ դրան ենթակա մոտ 17,5 հազար ընտանիքների հնարավորություն կտրվի փուլ առ փուլ վճարել դարտքերը: Դայմանավորվածություն է ձեռք բերվել Լոռու մարզից 1000 խմ վառելափայտ ներկրելու համար, մնում է գտնել այնդիսի տարբերակ, որով հնարավորություն ստեղծվի այն վաճառելու շուկայականից ցածր գնով: Իսկ քաղաքդետարանը դարտավորվել է որդես տարբերություն վճարել 156 միլիոն դրամ՝ քաղաքի միակ ջեռուցվող թաղամասի բնակիչների համար մեկ խմ ջեռուցման սահմանված վարձավճարը նվազեցնելու եւ 900 դրամ բողնելու նպատակով: Այս քայլերը, որքան էլ գնդահատելի, այնուամենայնիվ կարիք են կարիքի ծովում եւ հարց չեն լուծի: քանի դեռ գյումրեցին չունի աշխատելու ու իր վաստակով իր հոգսերը հոգալու հնարավորություն, ինչպես ինքը կուզենար:

Չնայած նախորդ տարիներից մնացած մեծ դարտքերին, դեկտեմբերի 6-ին «Անի» թաղամասի ջեռուցումը միացվել էր, բայց դայմանով, որ մինչեւ ամսի 20-ը հավաքվի 50 միլիոն դրամ կանխավճար՝ քաղաքը սնող Մայիսյանի ջերմակենտրոնի գազի ծախսի դիմաց: Սրանից 20 միլիոնը դարտավորվել էր տեղական բյուջեի հաշվին փակել քաղաքդետարանը, իսկ 30 միլիոնը հավաքվելու էր բնակչությունից: Դեկտեմբերի 18-ին Երեւանից «Հայռուսգազարդից» հեռախոսագիր էր սացել առ այն, որ դահանջվող կանխավճարը չարդահովելու դեդքում դեկտեմբերի 20-ին Մայիսյանի կաթսայատան գազամատակարարումը (իմա՝ քաղաքի ջերմամատակարարումը) կդադարեցվի: Այս մասին տեղյակ էր դահվել բնակչությանը, ու չնայած վերջին օրերին վճարումների որոշ աշխուժացմանը, մինչեւ ամսի 20-ը հավաքագրվել էր ընդամենը 8 միլիոն դրամ: Ինչ վերաբերում է քաղաքդետարանին, այն «իր» 20 միլիոնը վճարելու է համայնքներին հատկացվող լրավճարի գծով դետության կողմից քաղաքին դարտք մնացած 215 միլիոն դրամից, որի սացմանը սդասում է օր-օրի: Ու միայն մարզդետ Ֆելիքս Փիրումյանի միջնորդությամբ հաջողվեց անխուսափելի թվացող անջատումը նախ հետաձգել 2 օրով, իսկ այժմ վերջնաժամկետ է տրվել մինչեւ ամսվա վերջ: Եթե կանխավճարն այնուամենայնիվ չհավաքվի, այլեւս հետագա ջեռուցման հույս չի մնում: Իսկ այստեղի խստաշունչ ու տեւական ձմեռը դեռ առջեւում է:

Ի դեմ, արդեն այսօր լրիվ կամ մասնակի կդադարեցվի թաղամասի շուրջ 30 այնդիսի շենքերի ջերմամատակարարումը, որոնց բնակիչների մուծումների ցուցանիշերն ամենավատն են:

ԳԵՂԱՄ ԱՐՍԵՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Խոհակաց

ՀԱՅԱՑՔ ՍՓՅՈՒՌՔԻՑ

Սոայլ հեռանկարներ Հայաստանում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Հայաստանի անկախությունից ի վեր, ամեն անգամ, երբ երկիրը գտնվում է բարեփոխումների կամ հաջողությունների շեմին, անակնկալ զարգացումները գալիս են ամբողջովին չեզոքացնելու կամ առնվազն հետաձգելու ակնկալված առաջխաղացումը: Դժվարին բանակցություններից հետո, այս տարի կարծես Լեռնային Ղարաբաղի հարցում դրական ձեռքբերումներ էին նկատվում, մինչ ԵԱՀԿ բանագնացները շարունակում էին իրենց դիվանագիտական առաքելությունը տարածաշրջանում, եւ մինչ երկու ժեռությունների ղեկավարներ Սուլեյման Դեմիրելը եւ Հեյդար Ալիեւը առաջին անգամ հրաժարակայնորեն ակնարկել էին, որ գիջումները պետք է լինեն երկկողմանի, փոխադարձ: Ղեկավարներից յուրաքանչյուրը նման հայտարարության համար անշուշտ ուներ իր որոշակի նպատակները: Թուրքիան այսօր ամեն կերպ ցանկանում է առաջ տանել Եվրամիությանն իր անդամակցության գործընթացը, ինչպես նաեւ Բաքու-Ջեյհան խողովակաշարի շինարարության գաղափարը, որն իրականություն կարող է դառնալ միայն այն դեպքում, երբ տարածաշրջանում խաղաղությունն ու կայունությունը վերահաստատվի:

Մյուս կողմից, ըստ լուրերի, Ալիեւը վատառողջ է եւ մտահոգված իրեն արժանավոր հաջորդ գտնելու խնդրով: Այդ պատճառնում նա նախապատրաստում է իր որդուն՝ ադրբեջանական նավթային ընկերության նախագահ Իքար Ալիեւին, որպեսզի նավթային եկամուտները մնան ընտանիքում, ինչպես արվում է արաբական շեյխերի թագավորություններում կամ Ինդոնեզիայում, որոնց բռնատիրական վարչակարգերը նրա կողմից ժամանակին «չափավոր» են պիտակավորվել:

Անցյալ ամսվա ԵԱՀԿ հանդիպումը Ստամբուլում բավական շոշափելի արդյունքներ խոստացավ: Դրանից առաջ Վազգեն Սարգսյանի այցը Վաշինգտոն նույնպես հույսեր էր արթնացրել տնտեսության վերականգնման առնչությամբ: Սեպտեմբերին կայացած Հայաստան-սփյուռք համաժողովը թեեւ փոքր, սակայն դրական քայլ էր սփյուռքահայությանը հայրենիքի շուրջ համախմբելու ուղղությամբ: Մեկ ուրիշ զարգացում, որը կարող էր աննկատ անցնել, Չեչնիայի պատերազմական գործողություններից զերծ մնալու հանգամանքն էր, որն էլ ավելի կայունացրեց վստահելի գործընկերոջ՝ Հայաստանի մարտավարական արժեքը Մոսկվայի համար, միաժամանակ դրդելով Արեւմուտքին, որ հանուն իր շահերի Հայաստանին Ռուսաստանից հեռացնելու փորձեր կատարի:

Բայց հանկարծ հոկտեմբերի 27-ի ողբերգական կոտորածը եկավ չեզոքացնելու երկրի ամենաուժեղ ղեկավարներին, որոնք կարող էին բարեփոխումներ իրականացնել եւ տնտեսական առաջխաղացում ապահովել: Վարչապետ Վազգեն Սարգսյանը ուժեղ մարդ էր, որը կարող էր պայքարել կաշառակերության դեմ, հետեւել օրենքների կիրառմանը եւ դրանցով իսկ ներգրավել արտաքին ներդրումները: Այսուհանդերձ, Կարեն Դեմիրճյանն այն առաջնորդն էր, որը որպես Հայաստանում ամենաժողովրդական քաղաքական գործիչ, կոալիցիոն կառավարությանը մարդկայնական կերպարանք էր տալիս: Սարգսյանի համագործակցությունը Դեմիրճյանի հետ նրան տալիս էր իր ծրագրերը իրականացնելու ամեն հնարավորություն: Բայց նա խելամտորեն շաս առաջ չէր գնում: Նախորդ նախագահ Տեր-Պետրոսյանի օրոք նա էր վարչակարգի ողնաշարը, որը հետագայում Ղարաբաղից Քոչարյանին բերեց փոխարինելու Տեր-Պետրոսյանին: «Երկրապահի» կոալիցիան Դեմիրճյանի կուսակցության հետ նրան վերստին դարձրեց կենտրոնական դեմ:

Հայաստանի Սահմանադրությամբ գործադիր իշխանությունը գտնվում է նախագահի ձեռքում, բայց նորանկախ ժողովրդավարական երկրներում ուժեղ անհատները կարող են որոշակի դեր խաղալ:

Չնայած երկիրը ղեկավարելու գործում իր ունեցած համեմատաբար սահմանափակ կարողություններին, նախագահ Քոչարյանը կարողացավ վարչապետի հետ լավ համագործակցություն ցուցաբերում. եւ նախագահը կարծես գտնվում է մեկուսացված վիճակում: Սրա համար կան մի քանի պատճառներ.

ա) Առաջինը, իհարկե, տնտեսության անկման համար կան արտաքին եւ ներքին պատճառներ: Թուրքիան եւ Ադրբեջանը քաջատեղյակ են շրջափակման ավերիչ հետեւանքներին եւ շարունակում են էլ ավելի սեղմել օղակը՝ պատճառ դառնալով անարյուն ցեղասպանության՝ Հայաստանի բնակչության զգալի պակասեցման: Եվ ինչ հեգնական են ճակատագրի խաղերը, որ Հայաստանի շրջափակումը շարունակելու պայմաններում իսկ եվրամիությունը ճանապարհ է հարթում Թուրքիայի անդամակցությունը ընդունելու: Ներքին պատճառներից կարեւորագույնը ներդրումների եւ, իհարկե, այդ ներդրումները խրախուսող համապատասխան օրենքների պակասն է:

բ) Օտարատյացությունը գլխավոր թերություններից է Հայաստանում, որտեղ ներկայումս ամեն դժբախտություն կապում են Ղարաբաղի հակաիրավական գործունեության հետ: Սարգսյանի մահը եկավ բացահայտելու, որ ինքն էր բանակի փառասիրությունները զսպող եւ զինված ուժերի համակարգում հավասարակշռությունը պահպանող միակ անձնավորությունը: Իր մարտունակ ու միասարր տեսքին հակառակ, պարզվեց, որ բանակը տարբեր խմբավորումներից կազմված մի խճանկար է՝ բավական վտանգավոր մի իրադրություն, որը կարող է ջլատել բանակը եւ Հայաստանին ծնկի բերել: Ցանկացած ժամանակ կարող է հայտնվել մեկը, որն օգտվելով առիթից, մի խումբը հակադրի մյուսին:

Խորհրդարանի կոտորածը շրջեց ժամանակը դեպի ամենամութ օրերը անկախությունից հետո: Ներկայումս տնտեսությունը կանգ է առած: Օտար ներդրումները սակավաթիվ են, իսկ անփորձ ուժեր մեջտեղ են ընկել ղեկավարելու երկիրը: Սարգսյանի եւ Դեմիրճյանի փոխարեն կատարված երեք լիցքերից ավելի հուզական ենթատեքստ ունեին: Սակայն Սարգսյանը, որն իր եղբորը փոխարինեց վարչապետի պաշտոնում, հաջողակ գործարար էր եւ դիվանագիտությունը սովորելու է պաշտոնում գտնվելու օրերին:

Վազգեն Սարգսյանի եւ Կարեն Դեմիրճյանի քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո, սակայն, իշխանության ծոծանակը ամբողջովին չի թեքվել դեպի նախագահը: «Երկրապահի» վերջին համագումարն ավելի սրեց մթնոլորտն ի հակադրություն նախագահի, վարչապետին նեցուկ կանգնելու իր պատրաստակամությամբ: Նույնիսկ կոչեր հնչեցին հոգուս նոր նախագահական ընտրությունների, որն անուղղակիորեն նշանակում է Քոչարյանի հրաժարականի պահանջ:

Ցարդ սպանության հետաքննությունը սահմանափակվում է ոճրագործությանը տեղական բնույթ տալով, նշելով, որ ահաբեկիչները գործում էին անորոշ ծրագրով: Բայց տրամաբանությունը թելադրում է, որ Հայաստանի ուժեղագույն առաջնորդներին վերացնելը եւ դրանով իսկ ամեն կերպ երկիրը թուլացնելը կարող էր ձեռնտու լինել միայն Հայաստանի բշնամիներին: Չնայած Հայաստանը խիստ կարիք ունի համաձայնության հասնելու Ղարաբաղի հարցի առնչությամբ, որպեսզի ուշադրությունը բեւեռի այնուհետեւ տնտեսական զարգացման ոլորտին, Ստամբուլում համաձայնության ստորագրման հետաձգումը կարելի է բարիք համարել, քանի որ բանակցությունների սեղանին Հայաստանը նստելու էր թույլ դիրքերով, իսկ պարզ է, որ ոչ մի երկիր չի ցանկանա գտնվել նման իրավիճակում:

Երկրի ուժեղ առաջնորդների սպանությունից հետո Հայաստանը թեւակոխում է վտանգավոր կանխագուշակումներով անորոշ մի ժամանակահատված: Խորհրդարանում գերիշխող կուսակցություն դարձած «Երկրապահը» ցուցաբերում է անառաջնորդ խմբակցությանը բնորոշ անվճռական տատանումների բոլոր նշանները: Հայաստանում դեռեւս չկա կայացած, հասունացած կուսակցական համակարգ, ինչպիսին բնորոշ է արեւմտյան տերություններին, իսկ ավանդական կուսակցությունները, լավագույն դեպքում, դիտվում են որպես օտար ուժեր եւ մեկուսացվում: Չնայած նախագահը շարունակ հիշեցնում է ժողովրդին, որ ըստ Սահմանադրության ինքն է երկրի զինված ուժերի գերագույն հրամանատարը, բանակը տարբեր մարդկանց է հավատարմություն ցուցաբերում. եւ նախագահը կարծես գտնվում է մեկուսացված վիճակում: Սրա համար կան մի քանի պատճառներ.

ա) Առաջինը, իհարկե, տնտեսության անկման համար կան արտաքին եւ ներքին պատճառներ: Թուրքիան եւ Ադրբեջանը քաջատեղյակ են շրջափակման ավերիչ հետեւանքներին եւ շարունակում են էլ ավելի սեղմել օղակը՝ պատճառ դառնալով անարյուն ցեղասպանության՝ Հայաստանի բնակչության զգալի պակասեցման: Եվ ինչ հեգնական են ճակատագրի խաղերը, որ Հայաստանի շրջափակումը շարունակելու պայմաններում իսկ եվրամիությունը ճանապարհ է հարթում Թուրքիայի անդամակցությունը ընդունելու: Ներքին պատճառներից կարեւորագույնը ներդրումների եւ, իհարկե, այդ ներդրումները խրախուսող համապատասխան օրենքների պակասն է:

բ) Օտարատյացությունը գլխավոր թերություններից է Հայաստանում, որտեղ ներկայումս ամեն դժբախտություն կապում են Ղարաբաղի հակաիրավական գործունեության հետ: Բնական է, որ իշխանության բարձրագույն պաշտոններում դարաբաղցիներ են նշանակված:

գ) Կառավարության բարձր էշելոններում ղեկավարների միջեւ անվստահություն կա, որը լճացման է առաջնորդում: Տարածայնությունները հնչում են ոչ թե օրինական ընդդիմության, այլ երբեմն միեւնույն կուսակցության կողմից: Բավական շատացել են միմյանց հանդեպ մատ թափ տալու դեպքերը, որոնք տարածայնությունների հետ նպաստում են երկրում ընդհանուր խաղաղական մթնոլորտի վատթարացմանը:

Վերջին ամիսներին նախագահը հանիցս ակնարկեց, որ կարող է հրաժարական տալ: Սա մի սպառնալիք է, որ դժբախտաբար մեկ անգամ կարելի է օգտագործել: Եթե տարածայնություններն ավելի խորանան, եւ նախագահի հրաժարականն իրոք իրականություն դառնա, ապա Հայաստանի միջազգային վարկը մեծապես եւ անդառնալիորեն տուժելու է: Եթե յուրաքանչյուր նախագահ իր ժամանակը չսպառած սփռված լինի հրաժարական տալու անկայունությունն ամենագլխավոր գործոնն է դառնալու, որ ընդմիշտ վանի մեզանից ներդրողներին: Չէ՞ որ մինչեւ հիմա Հայաստանը հավակնում էր լինել ամենակայուն պետությունը տարածաշրջանում: Եվ դա չէ՞ր պատճառը, որ միջազգային օգնություն եւ վարկեր ընդհանրապես նրան: Հենց խարխլվի կայունության այդ վստահությունը, անկումն անխուսափելի կլինի: Իշխանության ղեկին կանգնողներն ավելի լայն ու հեռուն պետք է մտածեն: Հայաստանը չի կարող իրեն թույլ տալ, որ աշխարհին ներկայանա որպես ոչ հասուն, ինքնակառավարման ոչ պատրաստ մի երկիր: Եթե չսթափվենք եւ չգործենք որպես իր պատասխանատվություններին գիտակից մի ժողովուրդ, որն արժեւորում է իր անկախությունը, ապա անկախ եւ ժողովրդավարական երկիր ունենալու եւ պահպանելու մեր հույսերը կարող են վտանգի ենթարկվել:

Դեսպայ, 16 դեկտ. 1999

ԱՆԳՐԿՈՎԿԱՍ

Տարածաշրջանային անվտանգություն եւ համագործակցություն

Հավանականությո՞ւն, թե՞ ուտոպիա

Վերջերս ավելի ու ավելի հաճախ է խոսվում տարածաշրջանային անվտանգության համակարգի մշակման ու կենսագործման մասին: Առաջին անգամ ի լուր աշխարհի այս մասին խոսվեց սամիտյան գագաթաժողովում, երբ այսրկովկասյան հանրապետությունների նախագահներն իրենց ելույթներում, միմյանցից անկախ, խոսեցին նման համակարգի եւ տարածաշրջանային համագործակցության անհրաժեշտության մասին: Այն ժամանակ վերոհիշյալ միտքը փոքր-ինչ վերացական թվաց որպես լոկ խաղաղասիրական տրամադրությունների դրսեւորում կամ ժեստ, եւ չարժանացավ մեծ արձագանքի: Սակայն Սամիտյուից հետո էլ թեման շարունակվեց արծարծվել տարածաշրջանային եւ արտաքին հանդիպումների շրջանակներում՝ հետզհետե ձեռք բերելով ավելի ու ավելի գործնական բնույթ: Վերջերս ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի այցերը Ռուսաստան եւ Իրան հենց այդ նպատակին էին ծառայում՝ ճշտարկել իր անվտանգությունը կառուցող տարածաշրջանի համագործակցության հեռանկարներն անմիջական հարեւանների եւ այս տարածքում հզոր գործոն հանդիսացող Ռուսաստանի հետ: Նույն հարցը չէր շրջանցվելու եւ օրերս Բրյուսելում կայացած հանդիպմանը, որին ներկա էին գտնվելու համագործակցության շրջանակով նախատեսված մյուս 3 երկրները՝ Ադրբեջանը, Թուրքիան, Վրաստանը:

Տարածաշրջանային անվտանգության համակարգի գաղափարին բավականին եռանդուն հետամուտ է Ադրբեջանը, որն արդեն հարց է բարձրացնում համաադասախան պայմանագրի ստորագրման վերաբերյալ: Հիշեցնենք Ադրբեջանի արտաքին գործերի փոխնախարարի հայտարարությունը թե իրենք առաջիկայում ներկայացնելու են անվտանգության եւ համագործակցության դաշնագրի սկզբնական փաստաթուղթը: Ադրբեջանն անգամ խանդով է ընկալում տարածաշրջանային համագործակցության կազմակերպման գործում Հայաստանի նախաձեռնությունները՝ ասես մրցակցություն տեսնելով: Թերեւս, այսպիսի տրամադրությունները պայմանավորված են մտավախությամբ, թե առաջնություն չդրսեւորելու դեպքում կոչակասեն ծայնի ուժն ու պայմաններ թելադրելու իրավունքը: Իսկ հավասարակշռության ապահովումն այս համագործակցությունում չափազանց կարեւոր է՝ չէ՞ որ սա, ըստ էության, տնտեսական ու ռազմական ուղղվածության երկու դաշինքների միություն է լինելու: Առաջին հայացքից էլ արտաքոց է թվում Հայաստանի, Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի համագործակցությունը մեկ համատեքստի մեջ: Բնականաբար, համագործակցությունը չպիտի ծառայեցվի արդեն «հաշտված» լինելու անվան տակ սեփական շահերն առաջ հրելուն ու գերադասելուն: Այնինչ Ադրբեջանն արդեն որոշակի վերապահումով է վերաբերվում տարածաշրջանային գործընթացներին Իրանի մասնակցությանը: Արդեն իսկ, ավելի խստիվ, քան առաջ, ընդգծվում է Ռուսաստանը Հայաստանի հետ սերտ ռազմական հարաբերություններ ունենալու համար:

Ի վերջո, վերոհիշյալ համագործակցությունը, որպես հեռանկար, յուրաքանչյուրի կողմից արվող փորձ է վտանգավոր հարեւանին հաշտության ճանապարհով «վնասազերծելու», տարածաշրջանն այս երկրների ընդլայնվելու դաշտն է, սակայն երկրներից եւ ոչ մեկը չի կարողանում ազատ քայլ անել առանց հարեւանի «արգելանքին» բախվելու: Եթե շահերի պայքարը չմեղմացվի, համագործակցության գաղափարը կմնա սոսկ ցանկալի հեռանկար: Իսկ շահերի «երգչախումբն» այսօր դեռեւս իր աղմկոտ բազմաձայնն է երգում: Շարունակվում է տարածաշրջանում գերիշխանություն ձեռք բերելու Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի կիսասառը պատերազմը: Հայաստանն իր թիկունքը պաշտպանում է Ռուսաստանով, Ադրբեջանն ու Վրաստանը՝ ՆԱՏՕ-ով: Շարունակվում է եւս մի «սառը պատերազմ» նավթի արտահանման ուղիների տեղաբաշխումը. ծրագրերում, որոնցից յուրաքանչյուրը ենթադրաբար իսկայական շահույթ ու կարեւորություն է ապահովելու այն երկրներին, որոնցով անցնելու է: Բնականաբար, քանի որ խոսքը վերաբերում է ադրբեջանական նավթին, Հայաստանն այդ ծրագրերում գրեթե անտեսված է եւ կարող է իր տարածքով անցնող լոկ մի ենթաձյուղավորման «հույս» ունենալ... թերեւս, դարաբաղյան հարցում ինչ-ինչ փոխզիջումների փոխարեն: Շարունակվում է ռուս-չեչենական պատերազմը, որը կարող է վերջնական պայթյունի հասցնել ՈԴ-Մ. Նաթանգներ հարաբերությունները, որի հետեւանքով փոքր երկրները սփռված կլինեն ոչ միայն հրապարակել ու միաբերան դարձնել իրենց կողմնորոշումները, այլեւ հոգս կգնի «անհամատեղելի» երկրների համագործակցության ցանկացած փորձ: Չեչենական պատերազմն այսօր արդեն տեղափոխվել է հարավկովկասյան տարածաշրջան անհանգիստ լարվածություն ստեղծելով ռուս-վրացական հարաբերություններում: Հայ-թուրքական հարաբերություններն ի վերջո ոչ մի կերպ չեն կարգավորվում, քանի որ, չնայած արտաքին ճնշմանը, Թուրքիան շարունակում է Հայաստանի շրջափակումը եւ երկկողմ հանդիպումների զարգացումն ինքնաբերաբար բացառում անընդհատ մեջբերելով Արցախի հարցը: Ինչ վերաբերում է արցախյան հակամարտությանը, ապա առայժմ այդ հարցն է հայ-ադրբեջանական հարաբերությունների «հիմը», ինչն էլ նշանակում է, որ տարածաշրջանային անվտանգության համակարգի եւ համագործակցության գաղափարը որքան էլ արծարծվի, կենսագործումը չափազանց դժվար է լինելու, քանի որ առկա է հիշյալ չհարթվող անհարթությունը:

Այս առիթով արժե անդրադառնալ նաեւ ԵԱՀԿ Սինսկի խմբի գործունեությանը: Համանախագահողների տարածաշրջան կատարած վերջին այցի ընթացքում նրանց, ի թիվս այլ հարցերի, ներկայացվել էր նաեւ անվտանգության համակարգի ստեղծման գաղափարը: Համանախագահողներն իրենց գնահատականներում չափազանց անփութորեն էին արտայայտվել առկայության առնչությամբ համարելով «անհասկանալի իմաստով բարդ հարց» եւ անգամ չեն ճնարկել: Բացատրության տարբերակները ճի քանիսն են. կամ նրանք իրատեսական ու կենսագործելի չեն համարել նման համագործակցության գաղափարը, այն էլ տարածաշրջանում ընթացող այսօրինակ արագ ու անկանխատեսելի զարգացումների պայմաններում, կամ նրանց ափոթեցրել է Ռուսաստանի ներկայությունն այս միությունում, ինչն էլ ավելի անկանխատեսելի զարգացումներ է ենթադրում, կամ էլ նրանց (այսինքն իրենց կառույցին) ձեռնտու չի թվացել խայտաբղետ կողմնորոշումներով լի եւ դրանով էլ կառավարելի մի տարածաշրջանի ամբողջականացումը: Սակայն, ինչպես էլ ընկալվի, ի վերջո հաշտությանը դեմ կամ կողմ են «քվեարկելու» միայն ու միայն հիշյալ վեց մասնակից երկրները...

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

«ԿԱՆԱԶԻ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ

Կամպանիա մղելն էլ է շնորհք պահանջում

Եթե Ռուսաստանում որեւէ քաղաքական թե տնտեսական ուժ, խմբավորում կամպանիա է ծավալում հակառակորդի դեմ, ապա դա արվում է մասնաբայնորեն ու անողոքաբար: Վառ օրինակ է Կրեմլ-«Օտեչեստվո» հակամարտությունը: Իր ներքին խնդիրների մեջ մոլորված մեր փոքրիկ Հայաստանում նման պարագայում դժվար է մասնաբայնություն ակնկալել, բայց կարելի է շեշտը դնել գոնե որակի վրա: Իսկ եթե չկա ոչ առաջինը, ոչ էլ վերջինը, ապա դա արդեն ոչ թե կամպանիա է, այլ ինքնահաստատման տկար մի փորձ:

Ինչի համար է ասվում այս ամենը: Հայոց թերթերից մեկում վարկաբեկիչ կամպանիա է ծավալվել, ճիշտ է, բնավ էլ ոչ կառավարական մակարդակով, մոսկովյան ԲԱՄՕ ճանաչված շինարարական ընկերության դեմ: Հարցը շատ պարզ է. ածուրդի է հանվել Երեւանի «Կանազ» գործարանը եւ ԲԱՄՕ-ն ցանկություն է հայտնել մասնակցելու մրցույթին: Ընկերության նախագահ Մուրադ Մուրադյանը հանդիպել է հանրապետության ղեկավարության հետ եւ ներկայացրել իր առաջարկությունները: Ավելին, նա մեկ անգամ չէ Հայաստանից ներդրումներ կատարելու հրավերներ ստացել:

Բնական է նաեւ, որ նախաածուրդյան ժամանակահատվածում ապարեզ են գալիս զանազան լոբբիստական ուժեր, որոնք պայքար են մղում իրենց թեկնածուների օգտին: Ահա եւ «Հայոց աշխարհ» թերթը, որը չի թաքցնում իր համակրանքը մրցույթի մասնակից «Սիբալ» ռուսաստանյան ընկերության նկատմամբ, պախարակիչ հոդվածներ է տպագրում ԲԱՄՕ-ի մասին: Եթե Դորենկոն Լուժկովին հերթական ջախջախիչ հարվածը հասցնելիս ամբողջ մի խմբագրական կոլեկտիվ ու ֆինանսներ է ներգրավում նյութեր հայթայթելու համար, «Հայոց աշխարհը» ելնում է «իր ունեցած տեղեկություններից»: Եվ եթե ԲԱՄՕ-ի մասին դատենք ըստ այդ «տեղեկությունների», ապա վստահ կարելի է ասել, որ լրատվության աղբյուրը պարզապես ողորմելի է, ներկայացման ոճը՝ խղճահարության ասիճանի պրիմիտիվ: «ԲԱՄՕ-ն, տարփողում է թերթը, բացառապես շինարարական, դուռ-լուսամուտային բիզնեսով զբաղվող, ժամանակին արտագնա աշխատանքի (խոպան) գնալու արդյունքում Մուրադյան եղբայրների կողմից Մոսկվայի մերձակայքում ստեղծված ընկերությունն է»: Նախ, եթե մենք հայ ենք, պիտի ոչ թե փնովենք, այլ հպարտանանք, որ յոթ տարի առաջ հեռավոր Մարտունուց Մոսկվա եկած երեք (չորրորդը մնացել է Հայաստանում) եղբայրները, որոնք ռուսերեն խոսում էին ընդգծված առոգանությամբ, կարողացել են ստեղծել մի ընկերություն, որի հետ այսօր հաշվի են նստում Ռուսաստանի կառավարության անդամներ, նահանգապետներ, քաղաքագլուխներ: «Դուռ-լուսամուտային բիզնեսով» զբաղվող այս ֆիրմայի տարեկան աղրանքաշրջանառությունը հասնում է 80 մլն դոլարի: Դոլարի՝ եւ ոչ թե դրամի: Ընկերության կազմի մեջ մտնում է վեց խոշոր գործարան՝ մոտ 4000 աշխատողով: Մի քանի ամիս առաջ ԲԱՄՕ-ն ձեռք բերեց Վորոնեժի ալյումինե կոնստրուկցիաների գործարանի վերահսկիչ փաթեթը: Հոկտեմբերին գերմանական «Կյոմեռլինգ» եւ «Գրենցլանդ» ճանաչված ընկերությունների հետ համատեղ բացեց շինանյութերի մի արտադրություն, որը միակն է ողջ Արեւելյան Եվրոպայում: Հենց միայն ԲԱՄՕ-ի մի ձեռնարկության համար Ռուսաստանի «Сбербанк»-ն այս տարի, սուր ճգնաժամի պայմաններում, հատկացրել է 185 մլն դոլարի վարկ:

ԲԱՄՕ-ի «ստեղծագործություններից» մեկը Մոսկվայում

Բայց բավարարվենք այսքանով, թե չէ սա կվերածվի երկարաբուն չոր հաշվետվության՝ թերեւս ծանծաղի «Ազգի» ընթերցողների համար:

Հիմա դառնանք թերթի հավակնոտ հայտնագործությանը, որ ԲԱՄՕ-ն, որպես շինարարական ընկերություն, ոչ մի կապ չունի փայլաթիթեղագլանման հետ: Եթե զուտ ֆինանսական տեսակետից մոտենանք հարցին, ապա պիտի ասենք՝ հետո՞ ինչ: Եթե ֆիրման ներդրում է կատարում Հայաստանի էկոնոմիկայում, ապա ինչ կարեւոր է, թե այդ փողը ստացվել է շինարարական բիզնեսի՞ց, թե՞ պամպերսի արտադրությունից: Կարեւորն այն է, որ այդ կապիտալը՝ ցանկացած տնտեսության այդ միջազգային շարժիչ ուժը գործի Հայաստանում: Իսկ թերթի այն «անվիճելի» հայտարարությունը, թե ԲԱՄՕ-ն բացարձակապես ոչ մի կապ չունի ալյումինագործության հետ, հավակնում է ստահոդության: Եթե հոդվածագիր Հակոբյանը գոնե մի անգամ ներկա լիներ ԲԱՄՕ-ի արտադրած ամենաբազմազան շինանյութերի ցուցահանդեսներից գոնե մեկին, կտեսներ, թե ալյումինը ինչ տեղ է գրավում դրանց արտադրության մեջ: Ի վերջո, ինչու է ֆիրման գնել Վորոնեժի ալյումինի գործարանը: Շատ պարզ պատճառով՝ նա ինքը արտադրանքի է վերածում իր իսկ ալյումինը: Մեզ հայտնի չէ, հոդվածագիր Հակոբյանը ինչպես է հանգել հաջորդ հետեւությանը՝ ԲԱՄՕ-ն «ալյումինագործության հետ այնքան կապ ունի, որքան խոզը՝ պտտածոի»: Սա էլ եղավ հայ մամուլի մակարդա՞կ: Գուցե այս մարգանանասնական անհարիրությունը ավելի տեղին կլինի, եթե կողք-կողքի դնեն ԲԱՄՕ-ի էությունը եւ նշված հոդվածի «տեղեկությունները»:

Ինքնահիպության ասիճանի խորաթափանց է թերթը նաեւ իր կանխատեսումներով: «Որքան մեզ հայտնի է, գրում է թերթը (այդպես էլ հետեւողականորեն չբացահայտելով լրատվության աղբյուրը), ԲԱՄՕ-ն չի էլ պատրաստվում «Կանազը» ձեռք գցելու դեպքում այնտեղ ինչ-որ բան արտադրել: Այդ էր պակաս: Մուրադյան եղբայրները պարզապես կգնեն, հետո հարմար գնով կվաճառեն արտադրական տարածքները»: Իսկ գուցե ավելի շատ այդպես կվարվի, օրինակի համար, «Սիբալը»: Ռուսաստանն աշխարհով մեկ ինվեստիցիաներ է փնտրում, իսկ ահա «Սիբալը» իբր առաջադեռնորեն 29 միլիոն դոլար է հատկացնում «Կանազի» արդիականացման համար: Լավ, դրանք դոլարներ են, ոչ թե դրամ: Հակոբյան, եթե թեմա եք ընտրել ձեզ համար, գոնե ժամանակ գտեք ծանոթանալու ռուսաստանյան մամուլում «Սիբալի» մասին հրատարակվող հոդեստեսական նյութերին: Ինչու առաջնորդվել դատարկ «ենթադրություններով»: Իսկ եթե ուզում եք, կարող ենք հատուկ ձեզ համար մեջբերել Ռուսաստանի էկոնոմիկայի նախարար Անդրեյ Շադովալանցի կոնկրետ խոսքերը Մուրադյանների ֆիրմայի մասին: «ԲԱՄՕ-ն Ռուսաստանի առաջատար ընկերություններից մեկն է գերարդյունավետ շինանյութերի արտադրության բնագավառում: Նա հստակ պատկերացնում է, թե ինչ է բիզնես-նախագիծը, կարողանում է իրեն կոռեկտ պահել շուկայում՝ առաջնությունը շահելով գնի եւ որակի հաշվին, վարկային լավ պայմաններ ունի, այսինքն ֆիրման միանգամայն բարենպաստ հեռանկար ունի բանկից լրացուցիչ ռեսուրսներ ստանալու համար»: Ինչ է սա նշանակում: Սա նշանակում է, որ ԲԱՄՕ-ն կարող է գնել «Կանազի» նման ցանկացած այլ գործարան (եւ գնում է), բայց նա ընտրել է հենց «Կանազը», որովհետեւ դա նրան հնարավորություն է տալիս իր բիզնեսի շրջանակներում ինվեստիցիա կատարել հայրենի երկրի էկոնոմիկայում, աշխատատեղ ապահովել իր հայրենակիցների համար:

Իսկ հիմա խոսենք «Հայոց աշխարհի» որոշ զգացմունքային ընդվզումների շուրջ: Պարզվում է, որ ԲԱՄՕ-ն բովանդակ հայ ժողովրդին հայտնի է սոսկ... ԿԲՀ-ի մրցույթներից: Կոմունիստների ժամանակ «բարեգործություն» բառը փակի տակ էր: Ստացվում է, որ այսօր կարելի է հեգնանքի առարկա դարձնել: Մինչդեռ ԿԲՀ-ի մեր տաղանդավոր հայ տղաները չեն ժխտում, որ իրենց սրամտության մակարդակն էապես կախված է իրենց բարեկեցությունից:

Եվ եթե Մուրադյան եղբայրները հազարավոր դոլարներ են հատկացնում հիրավի արժանավոր հայրենակիցներին, դա, ինչ է, արգահատելի՞ երեւույթ է: Կարելի է ենթադրել, թե հայոց աշխարհը այսքան սիրող թերթը ինչ դաժան դատավճիռ կկայացներ Մուրադյանների համար, եթե իմանար, որ նրանք Մոսկվայում ֆինանսավորել են նաեւ հայ պարբերական հրատարակչություն, իրենց միջոցներով կազմակերպում են կոմիտասի երեկոն Չայկովսկու անվան նշանավոր համերգասրահում, կրթաթոշակ են նշանակում Մոսկվայում սովորող առաջադեմ հայ ուսանողներին եւ այլն, եւ այլն: Եթե Հակոբյանի համար դժվար է Մոսկվա գալ եւ տեսնել ԲԱՄՕ-ի գործարաններն ու մյուս օբյեկտները, ապա նա կարող է ավտոբուսով մեկնել Մարտունու Թաղագյուղ եւ իր աչքով տեսնել դպրոցական համալիրը, որ իրենց միջոցներով կառուցում են Մուրադյանները: Ամոթ չի լինի ասել, որ կառույցի նախագծային արժեքը կազմել է... երկու միլիոն դոլար:

Եվ, վերջապես, թերթը հրատարակել է նաեւ ԲԱՄՕ-ից դժգոհ «ջլուս ձեռքերով, ալեխառն մազերով» տղամարդու սրտակոտոր մենագրությունը: Հնարավոր չէ, որ Մուրադյաններից բոլոր հայասանցիները, հատկապես բազմահազար շինարարները գոհ լինեն: Բիզնեսը մարդկային գործունեության բնավ էլ սենտիմենտալ բնագավառներից չէ եւ ամեն ինչ կարող է պատահել: Բայց անայլառ լինենք. հուսահատության մատնված՝ կենսապահովություն փնտրող շատ հայասանցիներ հաճախ ավելորդ պահանջկոտություն են դրսեւորում մոսկվացի հայերի նկատմամբ, եւ գոհացնել բոլորին՝ գործնականում հնարավոր չէ: Այդուհանդերձ ԲԱՄՕ-ի համակարգում այսօր հաց են վաստակում 350-ից ավելի հայասանցիներ: Հազիվ թե նրանք ցանկություն հայտնեն կամավոր մենախոսությամբ հանդես գալու «Հայոց աշխարհում»...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

ԲԱՔՈՒ

Հեյդար Ալիեւը վերընտրվեց «Ենի Ազերբայջան» կառավարող կուսակցության նախագահ

ԲԱՔՈՒ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՊՈՒՏՆԻԿ-ԻՆՖՈՐՄ: «Ենի Ազերբայջան» քաղաքական կուսակցության մեջ համախմբված են հասարակության առողջ ուժեր, որոնք ընդունակ են ապահովել նոր հազարամյակում երկրի ժողովրդավարական զարգացումը: Նախագահ Հեյդար Ալիեւն այսպես բնութագրեց արդեքջանական հասարակության կյանքում իր գլխավորած կուսակցության նշանակությունը:

Ըստ Փրայմ նյուսի հաղորդման, համագումարի երեքշաբթի օրը կայացած եզրափակիչ նիստում նախագահ Ալիեւը միաձայն վերընտրվեց կառավարող կուսակցության նախագահ: Համագումարի մասնակիցները կազմեցին «Ենի Ազերբայջանի» նոր Քաղխորհուրդ՝ բաղկացած 195 մարդուց: Ուղղումներ են մտցվել կուսակցության կանոնադրության եւ ծրագրի մեջ: Մասնավորապես որոշվել է կուսակցական համագումարներ անցկացնելու պարբերականությունը, այսուհետեւ դրանք կգումարվեն չորս տարին մեկ: Կուսակցությունում հիմնվում է գործադիր քարտուղարի պաշտոն:

Համագումարի ամփոփիչ բանաձեւում «Ենի Ազերբայջան» կուսակցության յոթնամյա գործունեությունը գնահատվել է բավարար:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Խաղաղության գինը թանկ է նստելու

Իսրայելական բանակի ղեկավարությունն օրերս իրար է անցել ճգտելու Լիբանանի հարավից եւ սիրիական Գոլանի բարձունքից հեռանալու ծախսերը: Շփոթմունքի պատճառն այն է, ըստ RMC-ի թղթակցի, որ վարչապետ Եհուդ Բարակն անակնկալի բերեց իր գլխավոր շտաբի պետ Շաուլ Մոֆազին սիրիական շավիղում: Ըստ այդմ էլ, ֆինանսական արժողությունն արդեն իսկ սկսել է ենթարկվել քաղաքական նկատառումներին, ինչպես, օրինակ, իսրայելա-ամերիկյան հարաբերություններում: Իսրայելական բանակը ԱՄՆ-ից 50 միլիարդ դոլար էր պահանջել սիրիական եւ լիբանանյան գրավյալ տարածքների ազատումը ֆինանսավորելու համար: Բայց մերժվելուց հետո այդ գինը իջեցվել է 17 միլիարդ դոլարի:

Իսրայելական բանակը նախատեսում է ռազմական փոխարինող դիրքեր կառուցել հյուսիսային իր սահմանամերձ վերաբնակեցված վայրերում եւ արդիականացնել էլեկտրոնային ցանկապատը միջազգային սահմանի ողջ երկայնքով: Բացի այդ, փոխհատուցումներ են վճարվելու, այսպես կոչված, «հարավլիբանանյան բանակի» զինյալներին, որոնց մի մասը վերաբնակեցվելու է Իսրայելում կամ հեռացվելու է եվրոպական երկրներ: Խնդիրն ավելի բարդ է սիրիական հարթությունում, քանզի Թել Ավիվը մտադիր է ամռանը արձակել «Օֆիկ» տեսակի լրտեսական մի արհեստական արբանյակ, որը գործելու է ռուսական արբանյակի օժանդակությամբ, նաեւ ձեռք է բերելու զարգացած տեխնոլոգիաներ հետախուզության եւ մարտական ոլորտներում: Արաբական հողերից զորքերի դուրսբերման ծախսերով զբաղվելը թերեւս արտացոլում է մոտալուտ համաձայնության գալու Իսրայելի համոզմունքը, որը վստահ է նաեւ, թե ֆինանսավորումը լինելու է ամերիկացիների գրպանից:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Իրանական ավանդները՝ ԱՄՆ-ի հետ կապերի դիմաց

Դեկտեմբերի 22-ին ԱՄՆ-ի պետքարտուղարության խոսնակ Ջեյմս Ռուբինը հայտարարել է, որ ըստ Վաշինգտոնի, ամերիկա-իրանական հարաբերությունները բարելավելու ծիշտ ուղին 2 երկրների ուղղակի եւ առանց նախապայմանների երկխոսությունն է: Սա կատարվեց ի պատասխան Իրանի նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի նախորդ օրը արած այն հայտարարությունների, որոնցով նա լավատեսություն էր հայտնել ամերիկա-իրանական կապերի բարելավման հնարավորության առնչությամբ: Ըստ Քուվեյթի ռադիոյի, Ռաֆսանջանին կանխատեսել է, որ ի վերջո ԱՄՆ-ը եւ Իրանը համաձայնելու են 1980 թ.-ից խզված դիվանագիտական հարաբերությունները վերսկսելու շուրջ: Ռաֆսանջանին, որ ձգտում է գլխավորել առաջիկա խորհրդարանը, Վաշինգտոնին հորդորել է իր երկրի հանդեպ բարի վարքագծի նախաձեռնություն ցուցաբերել՝ վերադարձնելով իր մոտ սառեցված իրանական ավանդները, ինչը տեղի էր ունեցել Իսլամական հեղափոխությունից եւ Թեհրանում ԱՄՆ-ի դեսպանատան կորդուսի պատանդառումից հետո:

Ա. Ա.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Շվեդիայում նեոնացիստներն աշխուժանում են

«Ժողովրդավարության դեմ ուղղված սպառնալիք», «Իրավական պետությունը ճնշման տակ», այս եւ նման վերնագրերով շվեդական չորս գլխավոր թերթերն օրերս առաջին անգամ միահամուռ հրապարակեցին միեւնույն հետաքննությունը, ինչպես նաեւ շվեդ 62 նեոնացիստների եւ հանցագործ մոտոցիկլավարների անուններն ու ոճիրները:

Թերթերի հրապարակումներում արձանագրվում է մի մտահոգիչ փաստ. ծանր հանցագործությունների հետ կապված գործերի առնչությամբ ավելի ու ավելի մեծ թվով վկաներ են հրաժարվում դատարանում ցուցմունք տալուց վախենալով նեոնացիստների եւ մոտոցիկլավոր հանցախմբերի բռնարարքներից:

Շվեդ 1000 ոստիկանների եւ 650 դատախազների շրջանում անցկացված հարցումներից հետո թերթերը հաղորդեցին, որ արդեն զանազան սպառնալիքներ են ստացել ոստիկանների 90 տոկոսը եւ դատախազների 59 տոկոսը: Վերջին ներիս 79 տոկոսն զբաղվել է այն պիսի գործերով, որոնց վկաները սպառնալիքների են ենթարկվել: Երեք դատախազից մեկն ստիպված է եղել գործերը կարճել, քանի որ վկաներին ահաբեկել եւ լռեցրել են «Պուեն» հանդեսի վկայությամբ. վերջին տարիներին մոտոցիկլավոր հանցախմբերը եւ նեոնացիստներն այնքան են կատարելագործել իրենց ճնշամիջոցները, որ երբեմն վկաների զավակների հետ կապված պարզ նախազգուշացումը բավարար է լինում վկաներին լռեցնելու համար: Մասնագետներից ոմանք նույնիսկ սկսել են խոսել «լայնատարած ահաբեկչության» մասին:

Պ. Ռ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Երևանում վագր կա

Նախաբան Նաիրա Շահիրյանի վարքագրության

Տարեմուտի օրերին Երևանում վագր էր հայտնվել: Թոմ Թրեյսիի վագրը: (Ովքեր գիտեն այս վագրի մասին լավ է, ովքեր չգիտեն չարժե բացատրել, որովհետև սերը չի բացատրվում): Երիտասարդ մի տղա եւ սանչելի մի աղջիկ զգույշ բռնել էին միմյանց ձեռքից ու նայում էին իրար: Ուրիշ ոչինչ: Ամեն ինչ մաքուր էր, հասկանո՞ւմ ես, ու ամեն ինչ ճշմարիտ: Պառավող տղամարդիկ փակ սենյակում արագ-արագ գնում, գալիս էին, իբր թե: Բայց, Աստված վկա, նախանձում էին այդ տղային, որ ինքնորեն, զգույշ բռնել էր սանչելի աղջկա ձեռքը եւ խոսքեր չէր կարողանում ասել: Եվ ի՞նչ պիտի ասվեր: Բոլոր խոսքերն արդեն ասված են: Մնում է միայն երբեմն-երբեմն կրկնել, որպեսզի չմոռանանք, որպեսզի Թոմ Թրեյսիի վագրը միշտ արթուն մնա մեր մեջ:

Նաիրա Շահիրյանն ասում է էժեն Իոնեսկոյի խոսքերը, Բերանժե Առաջին արքայի երկրորդ կնոջ Մարի թագուհու խոսքերը:

– Գոյություն ունենալը բառ է: Մեռնելը բառ է, բանածեւեր, մտքեր, որ մտցնում ենք մեր գլուխը: Եթե այդ բանը հասկանաս, ոչինչ քեզ խոցել չի կարողանա: Ինքդ քեզ հավատիր: Քեզ ամուր պահիր: Էլ քեզ աչքաթող մի արա: Սուզվիր անգիտության մեջ այն ամենի, ինչը որ դու չես: Դու կաս հիմա, դու կաս: Եղիր լոկ մի անվախճան հարցմունք՝ ի՞նչ է, ի՞նչ... Պատասխանելու անկարելիությունը հենց ինքը պատասխան է: Հենց անկարելիությունն է քո էությունը, որ պայքարում ու տարածվում է: Սուզվիր անեզր ադամանդի եւ զարմանքի մեջ. այդպես դու ինքդ կկարողանաս դառնալ անեզրական...

...Դրսում ծմեռ է, անցուրտ, անձյուն, բայց ծմեռ: Մարդիկ ուզում են տեղավորվել վերարկուների մեջ, բայց ոչնչում են: Առանց վերարկուի փողոց դուրս գալն էլ անհարմար է, ինչպես քաղաքականությունից, գներից, սղաձից չխոսելը: Անհարմար է: Ու մարդիկ պատուհանից նայում են սանչելի աղջկան, որը մեզ համար այն խոսքերն է կրկնում, ինչին ծարավ ենք: Պարզ ու դառը մի բան է կատարվել. մենք մոռացել էինք սիրելը: Նաիրուհի Շահիրյանը մեզ հիշեցնում է սիրո մասին: Լիովին համաձայն եմ ակադեմիական ծիրանի հագած թատերագետների հետ. Նաիրա Շահիրյանը մեր բեմի այսօրվա ամենաողջամտ ասողներից մեկը չէ: Բայց...

– Ես գիտեմ սղասել, ասում է արտիստուհին, գիտեմ սղասել իմ ժամին: Իսկ այդ ժամը կգա: Գիտե՞ք ինչպես է լինում. փնտրում ես, փնտրում, ինչ-որ ժամանակ բվում է, թե գտել ես այն ամենաթանկը, որին միշտ ձգտել ես: Բայց պարզվում է, որ նրան արդեն ուրիշն է տիրացել, որ նա արդեն ուրիշինն է, քոնը չէ: Ու նորից ես շարունակում փնտրել: Ու մի օր կգտնես, անպայման կգտնես...

Ինչքան գեղեցիկ բան կա մարդու մեջ, ինչքան գեղեցիկ մարդիկ են, որոնք մեզ ասում են. «Ահա, նայեք պատուհանից, այնտեղ սերն է: Փողոցում ցուրտ է: Սակայն անցորդները չեն մտնում, քանզի տեսել են Թոմ Թրեյսիի վագրին: Սառնացույց անողը Նաիրա Շահիրյանն է եղել: Ու ծերացող տղամարդիկ կրկին հիշել են, որ գեղեցիկ աղջիկներ կան, ու պառավող կանայք զգացել են, որ իրենք մենակ են, անսիրտ: Ինչ կուզեն թող ասեն ակադեմիական թատերագիրները, Նաիրա Շահիրյանը մեզ այնպիսի խոսքեր է ասում, որ հազար տարի ոչ մեկը չէր ասել...

Ս. ԳԱԼՈՅԱՆ

ԲԻԶՆԵՍԸ՝ ԱՐՎԵՍՏԻՆ

Վերականգնվել է Այվազովսկու նկարը

«Էյչ-Էս-Բի-Սի ապահովագրություն (Հայաստան)» ՓԲԸ-ն օժանդակում է 19-րդ դարի կտավի վերականգնմանը

«Էյչ-Էս-Բի-Սի ապահովագրություն Հայաստան» ՓԲԸ-ի (HSBC) 1999 թ. ընթացքում ծավալված գործունեության կարեւոր դրվագներից էր Վատիկանի թանգարանի Սիքստինյան կապելայում Հայաստանի մշակութային գանձերի ցուցահանդեսի ապահովագրումը:

ՀՀ մշակույթի նախարարությունը եւ հինգ թանգարաններ ցուցադրում էին արվեստի շուրջ 104 ստեղծագործություն՝ սկսած մ. թ. ա. 2000 թ. արծաթե գավաթներից մինչեւ 19 դ. օտերային պարտիտուրներ: Ապահովագրության ընդհանուր արժեքը կազմում էր 20 միլիոն ԱՄՆ դոլար: Ցուցանմուշները 100 տոկոսով ապահովագրված էին HSBC-ի կողմից եւ վերաապահովագրված Լոնդոնում գտնվող հանրահայտ Lloyds ապահովագրական ընկերությունում՝ HSBC Insurance Brokers մասնագիտացված բաժանմունքի միջնորդությամբ:

Ներկայացվող թանկարժեք ցուցանմուշների թվում էր նաեւ Հովհաննես Այվազովսկու «Մխիթարյան հայրերը սուրբ Ղազար կղզում» յուղաներկ կտավը: Արվեստի այս ստեղծագործությունն ունի մեծ նշանակություն հայ մշակույթի համար: Ցավոք, ցուցանմուշները Հայաստան բերելուց հետո, հայտնաբերվեց, որ կտավը վնասված է եւ վրան առկա են երկու խորը խազեր կամ դանակի կտրվածք, որոնք, ըստ երեւույթին, հետեւանք էին միտումնավոր վանդալիզմի:

HSBC-ին օտերատիվ օժանդակեց ՀՀ մշակույթի նախարարությանը եւ Հայաստանի Պատմության պետական թանգարանին՝ կտավի վերականգնման գործում շուտափույթ կատարելով գումարային փոխանցում եւ հնարավորություն տալով անմիջապես ձեռնարկել վերականգնման աշխատանքները: Այժմ ամբողջովին վերականգնված կտավը կրկին զբաղեցրել է իր տեղը Հայաստանի պետական պատկերասրահում, իսկ HSBC-ին ամբողջովին վճարել է հատուցման փոխհամաձայնեցված վերջնական գումարն ամբողջ ծավալով:

«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ի «Էյչ-Էս-Բի-Սի ապահովագրություն (Հայաստան)» դուստր ընկերությունն ստեղծվել է 1998 թ. հունիսին HSBC խմբի կողմից Հայաստանում մատուցվող ֆինանսական ծառայությունների ցանկն ընդլայնելու ռազմավարության շրջանակում: Գործելով որպես ընդհանուր ապահովագրական ընկերություն, «Էյչ-Էս-Բի-Սի ապահովագրություն (Հայաստան)» ՓԲԸ-ն տրամադրում է ծառայությունների լայն շրջանակ եւ նշանակալից տեղ է զբաղեցնում հայաստանյան ապահովագրական շուկայում:

ՏԱՐԵՎԵՐՑՅԱԼ ՀԱՄԵՐԳԵՐ

«Բրիտանական ավիաուղիների» հովանավորությամբ

Երեւանում կրկին նվագեց Ալեքսանդր Չաուշյանը

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի հերթական համերգը վերջինն էր այս տարում: Ֆիլհարմոնիկի հաջորդ ելույթը «Արամ Խաչատրյան» համերգասրահում կկայանա տեւական ընդմիջումից հետո, 2000 թվականի հունվարի վերջին:

Համերգային ծրագիրը հարուստ էր ու բովանդակալի: Ունկնդիրներին ներկայացվեցին հայ եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Մինչ դեկավարման վահանակին մոտենալը: Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական դեկավար եւ գլխավոր դիրիժոր Լորիս Ճգնավորյանը հակիրճ խոսքով անդրադարձավ համերգացանկում տեղ գտած ստեղծագործություններին, ներկայացրեց մենակատար, միջազգային մրցույթների դափնեկիր, երիտասարդ բավջութակահար Ալեքսանդր Չաուշյանին, որը Լոնդոնից ժամանել էր հատուկ այս համերգում ելույթ ունենալու համար: Վերջինս կատարեց բավջութակի նվագը՝ Լ. Ճգնավորյանի հայկական թեմաներով գրված ռապսոդիայում: Ստեղծագործությունը գրվել է 1985-1986 թթ. եւ Երեւանում հնչեց առաջին անգամ: Ստեղծագործությունը գրված է հնչողությամբ ժողովրդական, այնպես էլ հոգեւոր ստեղծագործությունների մոտիվներով, որ արտացոլված են տարագրի ողբումները (հեղինակն արտերկրում ապրած տարիները տարագրություն համարեց): Ունկնդիրներն այն ընդունեցին մեծ ոգեւորությամբ, այդ էին վկայում ջերմ ու երկարատեւ ծափահարությունները: Արժանին պետք է մատուցել նաեւ Ալեքսանդր Չաուշյանին, որը կատարողական բարձր մակարդակով ներկայացրեց ոչ բոլոր երաժիշտներին մատչելի ստեղծագործությունը: Տեղի տալով ունկնդիրների տեւական ծափերին, երաժիշտը ծրագրից դուրս կատարեց եւս մեկ ստեղծագործություն:

Համերգում հնչեց նաեւ Ժորժ Բիզեի թիվ 1 սյուիտը «Կարմեն» օպերայից, իսկ համերգը եզրափակեց Ա. Դվորժակի թիվ 9 սիմֆոնիան:

Համերգը հովանավորել էր «Բրիտանական ավիաուղիների» երեւանյան գրասենյակը:

ԳՈՌԱՐ ԱՐԵԱՅԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔ

Երկխոսություն ծնողի հետ

Առաջներում, երբ երեխաներն իրենց վաս էին պահում, ենթադրվում էր, որ նրանք այդպիսին ծնվել են: Սակայն այսօր այդ տեսակետը սկսել է փոխվել: Հոգեբանների կուտակած մասնագիտական փորձը թույլ է տալիս պնդել, որ այն իրավիճակը, որի մեջ ապրում են մեր ժամանակի երեխաները, խաղես տարբերվում է մեզանից մի քանի տասնամյակ առաջ գոյություն ունեցող իրավիճակից: Եվ եթե նախկինում ծնողները բացառիկ ազդեցություն ունեին երեխաների վրա, ապա արդի դարաշրջանում հեռուստատեսությունը, կինոն, ռադիոն, տոմ եւ պոպ երաժշտությունը, կոմիքսները եւ պատկերազարդ գրքերը շատ դեպքերում ամբողջությամբ փոխարինում են ծնողներին: Արտաքին աշխարհից եկող ինֆորմացիայի ազդեցությունը հաճախ հանգեցնում է այնպիսի անկանխատեսելի արդյունքների, որոնք միշտ չէ, որ հնարավոր է ուղղել:

Ինչպե՞ս ուղղություն տալ ծնողներին երեխաներին մեծացնելու եւ դաստիարակելու ընթացքում լուծել հոգեբանական, մանկավարժական եւ բժշկական այնպիսի խնդիրներ, որոնց ծնողներն ի զորու չեն լիաժեղ պատասխան տալ սեփական կենսափորձի հիման վրա:

Հենց այս մասին է ամերիկյան հանրահայտ հոգեբան, հոգեբույժ եւ մանկավարժ Ալան Ֆրոմի «Այբուբեն ծնողների համար» գիրքը: Այն լույս է տեսել աշխարհի 20 լեզուներով: Հայերեն լույս է ընծայվել «Արեգ» հրատարակչության կողմից: ՀՀ հոգեբանական գիտությունների թեկնածու Ալբերտ Նալչաջյանի թարգմանությամբ: Նշենք, որ գիրքը թարգմանական մատենաշարի պետական պատվերով հրատարակվող գրքերի ցանկում է:

Իր բուն էությամբ այն մի երկխոսություն է ընթերցողի հետ հագեցած կյանքից վերցված բազմաթիվ օրինակներով: Գիրքը կազմված է այբբենական կարգով շարադրված հոդվածներից, որոնց շնորհիվ ընթերցողն ընտրում է իրեն տվյալ պահին հետաքրքրող հարցը: Ինչպե՞ս են ի հայտ գալիս երեխայի կամակորությունը, ագրեսիվությունը, ինչո՞ւ են երեխաները վախենում ինչ-որ բանից, ծծում բութ մատը, ինչպե՞ս ավելի ուշ տարիքում բացատրել երեխային: Չմեռ պատի հնարովի հերիաթը, որպեսզի նա ամելորդ հիասթափություններ չապրի, ե՞ր տարիքում կարելի է երեխաներին ճամբար ուղարկել, ինչպե՞ս սասել երեխային առանց նրա վրա բռնանալու: Յուրաքանչյուր մասնավոր դեպքին հեղինակը փորձում է պարզաբանում տալ եւ գտնում է, որ հաջողության կարելի է հասնել միայն բացատրելով երեխայի վարքի պատճառները: Ըստ նրա մարդու բնույթը շատ բարդ է եւ հնարավոր չէ մի քանի պարզ ցուցումներով բավարարվել: Բայց եւ այնպես, գրքում արծարձվել են ընտանեկան կյանքի համար անհրաժեշտ այն հիմնահարցերը, որոնց օգնությամբ կարելի է դաստիարակել զգայունակ մանկանը առանց նրա անձը ճնշելու: Հեղինակը հավատացած է, որ ժամանակակից գիտության որոշ կարեւորագույն տվյալների իմացությունը թույլ կտա կանխել բազում դաստիարակչական սխալներ եւ դրանով իսկ կնշանակի ծնողական երջանկությունը:

ՆՈՒՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

«Սեւակ» պոեզիայի թատրոնը 10 տարեկան

Կիրակի օրը արվեստասերներով լցվում էր Գյումրիի Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճը: Այստեղ նշվեց քաղաքամետ տարածքի մշակույթի բաժնի «Սեւակ» պոեզիայի թատրոնի 10 ամյակը: Ծնունդ առնելով 1989 թվականին, դեռ ավերակ Գյումրիում, այն ժամանակվա կոմերիտմության քաղկոմի համանուն ակումբի հիման վրա, «Սեւակ» պոեզիայի թատրոնն անցել է ինքնահաստատման ու կայացման ճանապարհ իր ավանդը բերելով քաղաքի հոգեւոր վերածննդի գործին:

• Թատրոնի հոբելյանը ողջունեցին թատերագետ, Երեւանի պետական թատերական ինստիտուտի տնօրեն Լեւոն Մուրադյանը, մարզպետարանի եւ քաղաքապետարանի մշակույթի բաժինների վարիչներ եւ ուրիշներ, ընթերցվեց Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանի շնորհավորական ուղերձը: Մասնավորապես Լ. Մուրադյանը, նշեց, թե պոեզիայի այս թատրոնը հոգու լույս է պարգեւված մեր օրերին:

Արդա թատրոնի ստեղծագործական խումբը ներկայացրեց Պարույր Սեւակի «Մարդը ափի մեջ» պոեմը: Հանդիսատեսը հոբելյանին վարձահատույց եղավ ջերմ ծափերով ու ծաղիկներով:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ՕՐՎԱԾՈՒՅՑ

Դեկտեմբերի 23

- 1790 թ. ռուսաց զորքերը Սուվորովի հրամանատարությամբ գրոհով վերցրել են Իսմայիլ ամրոցը, որը համարվում էր անառիկ եւ ամրացված էր ֆրանսիացի զինվորական մասնագետների կողմից: Իսմայիլի գրավումը ռուսներին հնարավորություն տվեց հաղթանակով ավարտել պատերազմը Թուրքիայի դեմ:
- 1725 թ. ծնվել է ֆրանսիացի գիտնական ժան-Ֆրանսուա Շամպոլիոնը: Նա եգիպտագիտության հիմնադիրն է, բազմիցս կազմակերպել է արշավախմբեր դեպի Եգիպտոս, հավաքել հին եգիպտական մշակույթին վերաբերող բազմաթիվ նյութեր, որոնք հրատարակվել են միայն գիտնականի մահից հետո: Շամպոլիոնը վերծանել է հին եգիպտացիների հիերոգլիֆները: Նա կազմել է նաեւ եգիպտերենի առաջին քերականությունն ու բառարանը:
- 1804 թ. ծնվել է ֆրանսիացի ճնշաղաս եւ գրող Շարլ Սեն Բյուվը: Նրա ճնշաղատական հոդվածները ուղղորդված էին Փարիզի համաշխարհային մշակույթի կենտրոնի գրական ճաշակով:
- 1858 թ. ծնվել է ռուս ռեժիսոր, թատերական գործիչ եւ մանկավարժ Վլադիմիր Նեմիրովիչ-Դանչենկոն:
- 1888 թ. ծնվել է ամերիկացի ռեժիսոր Մայլզ Քերտիցը: Ծագումով հունգարացի Քերտիցը 1922 թ. Բուդապեշտից մեկնում է Վիեննա, այնտեղից էլ՝ ԱՄՆ: Նա դառնում է հոլիվուդյան «Ուորներ բրադերս» ֆիրմայի հայտնի եւ հեղինակավոր ռեժիսորներից: Նրա «Կասաբլանկա» ֆիլմը 1942 թ. ստացել է մի քանի Օսկար:
- Այս օրը հին հայկական տոմարով Քաղոց ամսվա ծմակ օրն է:

ՆԱՐԻԿ ԹԱՊԵՎՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Հարություն Աբրահամյանը՝ Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ

1999 թվականի Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Երեւանի «Արարատի» եւ Հայաստանի հավաքականի դարձյալ դարձյալ Հարություն Աբրահամյանը:

Հարցմանը մասնակցել են ֆուտբոլի մասնագետներ, մարզական լրագրողներ թվով 70 հոգի: Նրանցից յուրաքանչյուրը նշել է 5 խաղացողի անուն (1-ին տեղը գնահատվել է 5 միավոր, 2-րդը 4, 3-րդը 3, 4-րդը 2, 5-րդը 1 միավոր): Ինչպես տեղեկացնում է «Ֆուտբոլ+» շաբաթաթերթը, հարցման մասնակիցներից 47-ը լավագույն ֆուտբոլիստ են ճանաչել Հարություն Աբրահամյանին, որն արդյունքում վստահորեն գրավել է առաջին տեղը: 30-ամյա դարձյասադիը հիանալի հանդես եկավ 1999 թ. մրցաշրջանում: Հարություն Աբրահամյանի վստահ, հավասար խաղը մեծապես նպաստեց, որպեսզի «Արարատը»-Հայաստանի առաջնությունում երկրորդ մրցանակակիր դառնա:

Հայաստանի երկրորդ ֆուտբոլիստ է ճանաչվել Արարատի «Ցեմենտի» կիսապաշտպան Ռոմիկ Խաչատրյանը: Նա այս տարի ընդգրկվեց հանրապետության հավաքականի կազմում եւ իրեն լավագույն կողմերով դրսեւորեց: Ռոմիկ Խաչատրյանին առաջինն են ճանաչել հարցման մասնակիցներից 18-ը:

Լավագույնների ցուցակի երրորդ հորիզոնականում տեղ է գրաղեցրել Գյումրիի «Շիրակի» եւ Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Արթուր Պետրոսյանը: Արթուրը հանրապետական առաջնության խաղերի միայն կեսին մասնակցեց, բայց չափազանց մեծ է նրա դերը «Շիրակի» հաջող մրցելույթներում: թիմը նվաճեց Հայաստանի չեմպիոնի կոչումը եւ արժանացավ Հ. Տոնոյանի անվան սուպերգավաթին:

Հարցման մասնակիցներն իրենց ցուցակներում ընդհանուր առմամբ 30 խաղացողի անուն էին նշել: Մարզասերներին ներկայացնենք առաջին տասնյակում տեղ գրաված ֆուտբոլիստներին եւ նրանց վաստակած միավորները.

1. Հարություն Աբրահամյան («Արարատ»)	310
2. Ռոմիկ Խաչատրյան («Ցեմենտ»)	213
3. Արթուր Պետրոսյան («Շիրակ»)	134
4. Արման Քարամյան («Կիլիկիա»)	88
5. Շիրակ Սառիկյան («Ցեմենտ»)	49
6-7. Կարեն Բարսեղյան («Արարատ»)	37
Կարեն Սիմոնյան («Ցեմենտ»)	37
8. Ֆելիքս Խոջոյան («Շիրակ»)	32
9. Հովհաննես Պեմիրճյան («Շիրակ»)	20
10. Արտավազդ Քարամյան («Կիլիկիա»)	17

Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ Հարություն Աբրահամյանը

Ներկայացնենք մեր բոլոր ութ մրցույթներում լավագույն ֆուտբոլիստ ճանաչվածներին.

1992 թ. Սարգիս Հովսեփյան (ՀՄԸՄ)
1993 թ. Արմեն Շահգելդյան («Արարատ»)
1994 թ. Արսեն Ավետիսյան (ՀՄԸՄ)
1995 թ. Սարգիս Հովսեփյան («Փյունիկ»)
1996 թ. Արթուր Պետրոսյան («Շիրակ»)
1997 թ. Հարություն Վարդանյան («Շիրակ»)
1998 թ. Արթուր Ոսկանյան («Ցեմենտ»)
1999 թ. Հարություն Աբրահամյան («Արարատ»)

Ինչպես տեղեկացնում է «Ֆուտբոլ+» շաբաթաթերթը, Հարություն Աբրահամյանը եւս մեկ մրցանակի է արժանացել: «Ֆուտբոլի աստղեր» ՍՊԸ-ն, որի հիմնադիրն ու նախագահը մեր ճանաչված դարձյասադիներից մեկն է Այոցա Անտոնյանը, սահմանել է հատուկ մրցանակ Հայաստանի լավագույն դարձյասադիի համար: Այս մրցաշրջանի լավագույն դարձյասադի է ճանաչվել Հարություն Աբրահամյանը:

ՀՈԿԵՅ

«Բալթիկայի գավաթ»-ը նվաճեց Ռուսաստանի հավաքականը

Մոսկվայում, «Լուժնիկի» մարզադաշտում անցկացվեց տափօղակով հոկեյի ավանդական միջազգային մրցաշար՝ «Բալթիկայի գավաթ» անվանմամբ: Մրցումներին մասնակցեցին Ռուսաստանի, Շվեդիայի, Ֆինլանդիայի, Չեխիայի եւ Կանադայի հավաքականները: Մրցաշարը նաեւ Եվրոտուրի մրցաշարի երրորդ փուլն էր: Իհարկե, Եվրոտուրում կանադացիների մասնակցությամբ խաղերի արդյունքները չեն հաշվարկվում:

Մեծ վերելքով հանդես եկան տանտերերը՝ Ռուսաստանի հոկեյիստները, որոնք 3 խաղ շահեցին, իսկ մեկ հանդիպում (Չեխիայի հավաքականի հետ) ոչ-ոքի ավարտեցին: Ռուսները «Բալթիկա-99»-ի հաղթող դարձան՝ իրենց դիրքերն զգալիորեն բարելավելով նաեւ Եվրոտուրի մրցաշարում:

«Բալթիկայի գավաթ»

	Խ	Հ	Ո	Պ	Տ	Մ
1. Ռուսաստան	4	3	1	0	19-10	7
2. Չեխիա	4	2	1	1	10-6	5
3. Ֆինլանդիա	4	1	2	1	7-6	4
4. Շվեդիա	4	1	1	2	9-9	3
5. Կանադա	4	0	1	3	6-20	1

Եվրոտուր

	Խ	Հ	Ո	Պ	Տ	Մ
1. Ֆինլանդիա	9	5	2	2	19-17	12
2. Չեխիա	9	5	1	3	21-14	11
3. Ռուսաստան	9	4	2	3	26-24	10
4. Շվեդիա	9	1	1	7	21-32	3

Եվրոտուրի եզրափակիչ՝ չորրորդ փուլը կանցկացվի Շվեդիայում, եկող տարվա փետրվարին:

ՄՐՑԱՇՐՋԱՆ-99

Անվանեցին լավագույններին

1999 թվականի **Ռուսաստանի** լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել իսպանական «Սելտա» թիմում հանդես եկող Վալերի Կարպինը: Հարցման արդյունքում նա առաջին տեղն է գրավել մեծ առավելությամբ՝ վաստակելով 697 միավոր: Երկրորդ տեղում է Մոսկվայի «Լոկոմոտիվի» ֆուտբոլիստ Ալեքսեյ Սմերտինը՝ 384 միավոր, երրորդ տեղում՝ «Սելտայի» մեկ այլ խաղացող՝ Ալեքսանդր Մոստովոյը՝ 339 միավոր:

Հարցման միջոցով որոշվել է նաեւ Ռուսաստանի առաջնության լավագույն խաղացողը: Այդ կոչմանն արժանացել է Ալեքսեյ Սմերտինը: Նա 686 միավոր է հավաքել: Երկրորդ եւ երրորդ տեղերում են Մոսկվայի «Սպարտակի» երկու ֆուտբոլիստներ՝ Անդրեյ Տիխոնովը եւ Եգոր Տիտովը, որոնք համապատասխանաբար 491 եւ 296 միավոր են վաստակել:

***

Ուկրաինայում 1999 թվականի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել իտալական «Միլանում» հանդես եկող հարձակվող Անդրեյ Շեւչենկոն: Երկրորդ տեղում է երկրի առաջատար թիմի՝ Կիեւի «Դինամոյի» կիսապաշտպան Սերգեյ Ռեբրովը (ի դեպ, նա երկրի լավագույն ֆուտբոլիստ էր ճանաչվել անցյալ տարի): Երրորդը «Դինամոյի» դարձյասադիի Ալեքսանդր Շովկովսկին է: Այս երեք ֆուտբոլիստներն էլ Ուկրաինայի հավաքականի առաջատար խաղացողներ են:

ԽԱՉԲԱՌ



Ուղղաձիգ

1. Գունավոր հեռուստացույցի հնարողը: 2. Երկրի կողմերից: 3. Միջնադարում նկարչին, ծաղկողին տվող անուն: 4. «Սիդա» օդերեւույթ գործող անձ: 7. Քիմիական է. Լենենս: 9. Հայ ահաբեկիչ: 10. Պատկերասրահ Փարիզում: 12. Հելիոպոլիս հին քաղաքի (Լիբանան) այժմյան անվանումը: 13. «Ծաղիկներս մնացին հեռվում» վեպի դամի (Լիբանան) այժմյան անվանումը: 13. «Ծաղիկներս մնացին հեռվում» վեպի հերոսուհի: 19. Սոսոցիկլեսը հնարող հեղինակը: 18. «Սուսա լեռան 40 օրը» վեպի հեղինակը: 21. Հայ բժիշկ, ուրոլոգ: 24. Կենտրոնական Ամերիկայում գտնվող հոնդուրաս երկրի այժմյան անունը: 25. Սոճազգի խոշոր ծառ:

Հորիզոնական

5. Նրան անվանում են խոովահույզ ու խոովարար ձիերի, հիրոսիմայի ողբերգության նկարիչ: 6. Ֆիրդուսու պոեմը: 8. Հայ բաստեղական գործիչ, ռեժիսոր: 11. Ավստրիացի հայտնի լեռնադահուկորդ: 14. Ա. Բակունցի «Սքնածոր» պատմվածքի անտառային հերոսը: 15. Ն. Զարյանի «Փորձադաշտ» կատակերգության հերոսներից: 16. «Լեյլի եւ Մեջնուն» ռնարատիկական պոեմի հեղինակը: 17. Արիլ Գորկու իսկական ազգանունը: 20. Սիրած կնոջ պատուհանի տակ գիշերով կատարվող երգ, գիշերերգ: 22. Ծակող գործիք: 23. Միքելանջելոյի խանդակներից: 26. Հայ մաթեմատիկոս: 27. Տուրգենեւի «Մումու» պատմվածքի հերոսը: 28. Հայ բախմատիստ:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղաձիգ

1. Սերսերես: 2. Ուստ: 3. Ապամբ: 4. Սուրիակ: 5. Դիոր: 6. Անսպարծ: 9. Լորդ: 10. Տարիել: 12. Սներ: 17. Եղեռնակ: 18. Պավլովա: 19. Գոյական: 21. Վանաձոր: 25. Արահեց: 26. Նանոգրամ: 28. «Ամանգարդ»: 30. Էրան: 32. Արգո: 33. Աստասան: 34. Բաղիս: 39. Սոած: 41. Բուակ:

Հորիզոնական

7. Փելեբան: 8. Ֆուծիյամա: 9. Լեդա: 11. Հերա: 13. Պեռ: 14. Մալաքիա: 15. Նաղթ: 16. «Վերդեր»: 20. «Ամրոա»: 22. Բաբելոն: 23. Որբեի: 24. Յագուար: 27. Պլորժակ: 29. «Դարիկ»: 31. Առաքի: 35. Գոյա: 36. «Ռենեդիա»: 37. Գանա: 38. «Նանա»: 40. Լոր: 42. «Բաղբաղար»: 43. Սիրամարգ:

Ինտերմոթոր Արմենիա ՀՁ ՓԲԸ : Intermotor Armenia JV CJSC

M-class
Ճանապարհը Ձերն է
Own the Road

ԳՐԱՍԵՆՅԱԿ ԵՎ ԱՎՏՈՍՐԱՀ
Արամի 2, Երեւան 375010
Հայաստանի Հանրապետություն
Հեռ. (374-2) 52-80-85
(374-2) 58-12-75
Ֆաքս. (374-2) 56-51-79
(374-2) 15-18-50
Էլ.փոստ. intmot@arminco.com

OFFICE & SHOWROOM
2 Arami St., Yerevan 375010
Republic of Armenia
Tel.: (374-2) 52-80-85
(374-2) 58-12-75
Fax: (374-2) 56-51-79
(374-2) 15-18-50
E-mail: intmot@arminco.com

Mercedes-Benz
Ավտոմոբիլի ապագան

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ
Օրվա հետքերով

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ»

Փարիզ-Երեւան՝ Ֆրանկֆուրտով

Սկիզբը էջ 1

Բայց որեւէ մեկը երբեւէ պիտի զբաղվի՞ այս խնդրով: Խոսքն այս պետության դարձյալ մասին է, որի ճակատին եթե գրառում հայտնվեր, լինելու էր ոչ այլ ինչ, քան ճոճիմություն, քանզի պարզապես քաղաքակիրթ անլիարժեք կլիներ: Այսպես է ավարտվում Հայաստանը:

Արար երկրորդ

Իսկական անակնկալն իր ուղեւորներին «Հայկական ավիաուղիները» մատուցեց վերադարձի օրը Փարիզում, երբ հայտարարվեց, որ Փարիզ-Երեւան դեկտեմբերի 20-ի չվերթը չի կայանա: Ուղեւորները պիտի գիշերեին Ֆրանկֆուրտում՝ այնտեղից Երեւան հասնելու մեծ հույսով: Ինչո՞ւ չվերթը չի կայանում: «Հայկական ավիաուղիների» ներկայացուցիչները տեղում նախ պարզաբանեցին, թե ինքնաթիռը չի ժամանել Հայաստանից: Պարզեցին, որ ինքնաթիռն այնուամենայնիվ վայրէջք կատարել է Շառլ դը Գոլ 1 օդանավակայանում: Ինչո՞ւ այնուամենայնիվ: Որովհետեւ թռիչքի ու վայրէջքի ժամանակ լուրջ անսարքություններ են ի հայտ եկել: Արդեն Ֆրանկֆուրտում տեղեկացանք, որ վերոհիշյալ հանգամանքներից զատ, օդանավը պահվել է Փարիզի օդանավակայանում որպես գրավ «Հայկական ավիաուղիների» պարտքերի դիմաց: Ավիաընկերության պատասխանատուներն այս տեղեկությունը չհաստատեցին: Քաջատեղյակ մի քանի աղբյուրներ նշեցին, որ «Հայկական ավիաուղիներն» իսկապես պարտքեր ունի դրսում: Ինչեւէ, Երեւան ժամանող ուղեւորներին սպասում էր «Հայկական ավիաուղիների» մեկ այլ ինքնաթիռ Ֆրանկֆուրտում, ինչպես մեկնման ժամանակ սպասարկման ցածր մակարդակով եւ մասնային հայաստանյան հայտնի աշխատակիցներին վերստին հանդիպելու հեռանկարով:

Այսպես է սկսվում Հայաստանը, որտեղ այնքան խոսում են եվրոպական ինստիտուտների հաստատման, առաջավոր աշխարհին ինտեգրվելու մասին: Ցավոք, այնպիսի տպավորություն է, թե միայն խոսում են:

ՍՈՍԿՎԱ

Պուտին. ԱՊՀ-ն պետք է ամրապնդվի ելնելով Ռուսաստանի շահերից

ՍՈՍԿՎԱ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: ԱՊՀ-ի ամրապնդումն իրականացվելու է ելնելով Ռուսաստանի շահերից, այսօր հայտարարեց ՌԴ կառավարության նախագահ Վլադիմիր Պուտինը, պատասխանելով Դաշնության խորհրդի անդամների հարցերին:

«Մենք ԱՊՀ-ն ամրապնդելու ավելի շատ կարելիություններ կունենանք, եթե Ռուսաստանն ավելի ուժեղ լինի, հետեւաբար եւ ավելի ձգող: Նրանք այդ դեպքում իրենք կձգվեն դեպի մեզ», հայտարարեց վարչապետը:

«ԱՊՀ-ն ամրապնդելիս պետք է ելնենք Ռուսաստանի ազգային շահերից, բայց չպետք է թույլ տանք, որ ռուսաստանցիների միասնացման ձգտումը օգտագործվի ի վնաս Ռուսաստանի շահերի, Ռուսաստանից բնաթափվածների «մերձավորման» համար», նշեց Վլադիմիր Պուտինը:

Նա ընդգծեց, որ եսխորհրդային տարածաշրջանում իր գործողություններում Ռուսաստանը պետք է «հանգիստ, առանց կայսրապետական հավակնությունների վերականգնի հարաբերությունները նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների հետ»:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Ամերիկացիները վիճում են, թե երբ է սկսվելու նոր դարը

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Ամերիկացիները մտահոգված են, եւ նրանց տագնապների պատճառը շատ անսովոր է: Մինչեւ այժմ ԱՄՆ-ի բնակիչների շրջանում լիակատար համոզվածություն չկա այն բանում, թե վերջապես երբ է սկսվելու նոր դարը եւ նոր հազարամյակը:

Հատկանշական է, որ իր կասկածներով 20-րդ դարի մարդկությունը բնավ էլ ինքնաշիռ չէ: Անգիջում վիճելով, թե երբ կսկսվի երրորդ հազարամյակը, մեր ժամանակակիցները հաստատում են 1801 թ. հունվարի 1-ին «Քոլոմբիան սենթինել» լրագրում արված կանխագուշակությունը: Գրեթե երկու դար առաջ թերթը գրել էր. «Եթե կարողանայինք 100 տարի անց նայել երկրագնդին, ապա կտեսնեինք, որ մեր երեխաները վիճում են եւ փորձում ֆակել այդ հանգույցը նույն կերպ, ինչպես որ մենք»:

Եվ իրոք, 100 տարի անց մարդկությունը չկարողացավ որոշել, թե, ի վերջո, երբ է վրա հասնելու նոր դարը: Աշխարհը բաժանվել էր երկու ճամբարի, մեկում մտադիր էին նոր դար թեւակոխել 1900 թ. հունվարի 1-ին, մյուսում՝ 1 տարի անց:

«Նյու Յորք թայմսը» այն ժամանակ անվերապահորեն պաշտպանել էր 1901 թ. կողմնակիցներին, բացատրելով, թե դրա օգտին են վկայում «բոլոր փաստերն ու հիմնավորումները»: Իսկ «Փոստ-դիսպեչ» լրագիրն ընդհանրապես առաջարկել էր այդ հարցի շուրջ հանրաքվե անցկացնել:

Տասիկը բարեհաջող ծննդաբերեց իր թոռնուհուն

ԴԵԼԻ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Հնդիկ բժիշկների կողմից կիրառվող արդիական տեխնոլոգիաները մայրական գծով 48-ամյա տասիկին հնարավորություն ընձեռեցին բարեհաջող ծննդաբերելու իր թոռնուհուն: Եզակի վիրահատությունն իրականացվել է Ջայպուրի մայրության պատշգամբության կենտրոնում:

Կենտրոնի առաջատար մասնագետ Գունջան Ջայնի խոսքերով, մանկիկի մայրը ծննդաբերելու հնարավորությունից զրկվել էր 1992 թ. կեսարյան հատման ենթարկվելուց հետո, որը բարդացել էր բորբոքային լուրջ պրոցեսներով: Սակայն նա չէր կորցրել սերնդի վերարտադրման ընդունակությունը: Դա էլ բժիշկներին թույլ էր տվել ամուսնական զույգին առաջարկել, որ նրանց ապագա երեխան «սաղմնավորվի փորձանոթում»: Սաղմն աճեցնել էր «համարձակվել» տատը, որն այժմ չի կարողանում թաքցնել ուրախությունը եւ անչափ հպարտ է իր արտասովոր «կարգավիճակով»:

ԱՄԱՆՈՐ

Թուրքիան 15 ժամով կփակի Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցները

ՍՆԿԱՐ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԿԲ: Թուրքիան հայտարարել է, որ դեկտեմբերի 31-ին մեծ նավերի անցման համար կփակի Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցները: Թուրքիայի իշխանությունները անհրաժեշտ են համարել այդ միջոցառումը 2000 թվական մուտք գործելիս համակարգչային համակարգերի հնարավոր խափանման հետեւանքների առավելագույնս նվազեցման համար: Ավելի քան 200 մետր երկարություն ունեցող նավերի համար Բոսֆորն ու Դարդանելը կփակվեն 15 ժամով դեկտեմբերի 31-ին ըստ Գրինվիչի ժամը 14:00-ից սկսած, իսկ առավել քան երեք տոննա ջրատարողությամբ նավերի համար՝ սկսած ժամը 16:00-ից:

ԲԱՔՈՒ

«Ադրբեջանը պետք է հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարի»

ԲԱՔՈՒ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԿԲ: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւն ամենայն հավանականությամբ որոշել է Հայաստանից փոխ առնելու վերջինիս դիվանագիտական գործունեության փորձը եւ իր երկրի արտաքին քաղաքական գծի հիմքում դնելու կոմպրոմիսային քաղաքականության սկզբունքը:

«Ադրբեջանը պետք է հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարի: Բանում պետք է ամրապնդի իր բարեկամական հարաբերությունները հարեւան երկրների հետ», իր գլխավորած «Ենի Ազերբայջան» կուսակցության դեկտեմբերի 21-ին կայացած համագումարի ժամանակ հայտարարել է Ալիեւը: Դրա հետ մեկտեղ, նա շողոքորթել է Թեհրանին, ասելով, որ Իրանը ոչ միայն պետք է մասնակցի տարածաշրջանի անվտանգության համակարգում, այլեւ հանդես գա իր նախաձեռնություններով, նշում են Ադրբեջանի ՁԼՄ-ները: Նշենք նաեւ, որ ԵԱՀԿ Ստամբուլում սույն թվականի նոյեմբերին կայացած գագաթաժողովի ժամանակ Հեյդար Ալիեւը հանդես է եկել Հարավային Կովկասում անվտանգության եւ համագործակցության շուրջ պակաս կնքելու առաջարկությամբ: Թվարկելով այն երկրները, որոնք պետք է միանան այդ պակտին, Ալիեւը չի հիշատակել Իրանի մասին:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, Ալիեւը կրկնել է, որ հակամարտության կարգավորումը հնարավոր է փոխադարձ զիջումների ճանապարհով: Նա ծիծաղելի է անվանել որոշ ընդդիմադիր ուժերի առաջարկությունները, որոնք հանդես են եկել Լեռնային Ղարաբաղին մշակութային ինքնավարություն տրամադրելու գաղափարով: Ալիեւը նշել է կրակը դադարեցնելու ռեժիմի պահպանման հնարավորությունը եւ այդ հարցի առնչությամբ իշխանությունների վարած քաղաքականության աջակցությանը նպատակաուղղված ջանքերը շարունակելու անհրաժեշտությունը:

Ադրբեջանի նախագահն ընդգծել է, որ գիտակցում է իր պատասխանատվությունը հակամարտության կարգավորման առնչությամբ: «Հեյդար Ալիեւը կախարդական փայտիկ չունի, որպեսզի լուծի այդ խնդիրը մեկ օրում: Սակայն հավատում եմ, որ մենք կկարգավորենք այդ հակամարտությունը», ասել է Ադրբեջանի Հանրապետության ղեկավարը:

AED
Academy for Educational Development
Կրթության զարգացման ակադեմիային (AED) անհրաժեշտ է վարորդ, որն ունի վարորդական փորձ, նոր, բարեստ սեփական մեքենա:
Ընտրության ժամանակ նախապատվությունը կտրվի անգլերենին բավարար տիրապետողներին:
Հետաքրքրվողները մինչեւ դեկտեմբերի 30-ը կարող են դիմել AED երեւանյան գրասենյակ (Այգեձոր նրբ. 54ա), հեռ.՝ 27-17-20, 27-70-08, բջջային հեռ.՝ 40-74-08:
Դիմել Արամ Կարապետյանին:

ԼՈՒԾԱՐՎՈՒՄ է
«ԿԱՍՏԱՆԵՏ» անհատական ձեռնարկությունը՝ գրանցված 20.10.98 թ., պետեգիստրի վարչության Արաբկիրի բաժանմունքում: Գրանցման համար՝ 26402004483, վկայական 043299:
Պարտատերերը երկամսյա ժամկետում դիմեն Կոմիտաս 36, բն. 47 հասցեով:

ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒԱԾՈՒԹՅՈՒՆ

23 դեկտեմբեր

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.20 Սամուլի կրպակ
10.30 Սուլտֆիլմ «Ցանկություններ կատարում»
11.00 Գ/Ֆ «Դատավարություն եւ փնտրվող»
12.35 Կարոտ
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Մինչեւ 17
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
18.55 Խոսող շահում
19.30 Հեռուստասերիալ «Կրթեր»
20.00 Բժիշկ եւ հիվանդություն
20.25 Արտակարգ պլիտ
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Պրեմիերա
21.55 Գ/Ֆ «Մահվան աղամանը»
23.30 Հիթ շերթ
00.00 Հայլուր
00.20 Կեսգիշերային ճեղքոցաց
01.20 Ռուբիկոն+

Պրոմեթեւս
9.05 Վաղ առավոտյան
10.00 Սուլտֆիլմ
10.20 Կուլիսների հետեւում
10.40 Սերիալ «Կանանց աշխարհը»
11.25 «Սուրբման եւ ընկ.»
12.00, 18.00, 20.30, 0.55 Լուրեր
18.20 Սուլտֆիլմ
18.40 Վ/Ս «Բնությունը պահպանման»
19.05 Երիտասարդական ծրագիր «Ելակետ»
19.30 Ծիրանե տնակ
20.00 Երաժշտական օրագիր «Սրտի բանալի»
21.00 Սերիալ «Հարավային ծովերի պատմությունը»
21.50 Շոու գրույց «Սենյակ»
22.30 Ուշ երեկոյան
23.10 Գ/Ֆ «Սեռյալ գոտի»

9.00 Տոմար
ավարտին կամ... կամ (կրկնություն)
19.00 Հրադարակ
19.10 «Շոշինկը» ներկայացնում է բնաշխարհ
19.30, 21.30, 23.30, 2.30 Սուր հանդակ
19.50 Սամուլի խոսնակ
20.05 Ի դեմ
20.30 Ամպարեզ
21.10 Շղթկ
21.50 Գ/Ֆ «Միրահարները»
24.00 Զրո ժամ
0.05 Երաժշտական դադար
0.15 «Կինո 2»-ը ներկայացնում է Գ/Ֆ «Սոնթենքոր»
1.50 Հանդեպ

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Սուլտերիալ «Գազանների մենամարտը»
16.45 Սեզամ փողոց
17.10 Վիկտորինա երեխաների համար
17.20... Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Կալանքուր
19.55 Գործընթաց
20.40 Սերիալ «Որսորդության երջան» (դերերում Ի. Գրիգորեւա, Ի. Շավլակ, Բ. Խիմիչեւ, Ի. Լեդոգորով, 1997 թ.) (1-ին սերիա)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 ժամանակ
23.00 Գ/Ֆ «Ցանկագինս եւ փոխարինել եմ երեխաներին» (դերերում Ռ. Սորանիա, Մ. Սարասան, ԱՄՆ, 1989 թ.)
24.45 Երգ 99
01.25 Խաղաղ տուն
01.55 Նորություններ
02.20 Գ/Ֆ «Գիժ կինը»

7.30, 10.20 Բարի լույս, Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հերթապահ բաժանմունք
10.20 Հումորատիպ եւ առողջություն
10.30 Հեռուստահանդես «Արենա սպորտ»
11.00 Հումորատիպ եւ առողջություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.00 Սերիալ «Մեր զաղտնիքի ամառը»
13.00 Ուրախ Օսը Ֆիլիպ Կիրկորովի հետ
13.50 Հումորատիպ եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.20 Հեռուստախաղ «Հայլուրը մենակ»
15.10 Սերիալ «Անտանելի»
16.05 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.00 Խանութ բաղնոցի վրա
17.30 Սուլտֆիլմեր
18.20 Ստատակ
19.00 Սերիալ «Կոմիսար Ռեքսը»
20.30 Ռուսական սերիա. «Ցանկանում եմ երջանկություն»
21.25 «Սոֆիտակ թուրակ» ամսագիր
22.45 Ֆանտաստիկայի բաբաք. Միրա Սորվինոն եւ Ջերեմի Նորթոնը «Սուտանները» ֆիլմում (ԱՄՆ)
00.40 Հերթապահ բաժանմունք
00.55 «Նորաձեւություն+TV»
02.20 Թեժ տասնյակ
03.15 Խանութ բաղնոցի վրա

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (590000), տեղեկագրով (1800 դրամ), սկավառակով (3600 դրամ), INTERNET ցանցով (www.arminco.com/spyur; spyur.acc.am; armscape.com/spyur)
«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արամյանների 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1178. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 22.12.1999. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@